№ 20 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 28

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 20 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 28

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Յունվարի 1-ից մինչև 1 յունիսի 4 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնակայա փողոցների անկիւն)։ Առորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԿԱՐԳԵՐ

ԲԱԶԱԶԽԱՆԻ ՄՕՏ

(Манташевскіе ряды)

ԵՐԿԱԹԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹ

Դաւիթ Եսայեան Առաքելեանցի

Յայտարարում եմ ի գիտութիւն յարգելի ժողովրդին և իմ պ. պ. կլիենտներին՝ թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների, որ իմ խանութները, որոնք կային թէ Թուրքերի Մայդանում և թէ Սալլասսկի բազարում, ես անցեալ տարվայ նոյեմբերի 22-ից փոխադրել եմ մի նոր տեղ, մի ընդարձակ խանութ Բազարխանի մօտ, Մանթաշեանցի նոր շինութեան մէջ, և դրա համար էլ յայտարարում եմ, որ այն բաց հաշիւները, որոնք վերաբերում են իմ վերոյիշեալ դադարեցրած խանութներին, պէտք է մաքրվեն իմ նոր խանութում։ Ցուսով եմ, որ բոլոր իմ կլիենտները չեն թողնի իմ նոր խանութը առանց ուշադրութեան։

3—10 (հ. կ.) Ցարգանօք՝ Դ. Ե. Առաքելեանց

Տիկին Նունէ Յ. Ալիբէգեանը յայտնում է իր ազգականներին և ծանօթներին, որ այսօր, ամսոյ 28-ին, իր ամուսնու՝

ՊԵՏՐՈՍ Յ. ԱԼԻԲԷԳԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը Մողնու ս. Գէորգ եկեղեցում հոգեհանգստեան պատարագ կը մատուցվի։

Վաղը, կիրակի, յունվարի 29-ին, ցերեկվայ ժամը 12½ ին

ՆԱԴԵԺԴԱ ԱՄԱՐՕՍԻԵՎՆԱ ՊԱՊԱՅԵԱՆԻ

վաղաժամ մահվան առիթով Մողնու ս. Գէորգ եկեղեցում հոգեհանգիստ կը կատարվի, որի մասին յայտնում են հանդուցեալի ծանօթները և նրա տաղանդը յարգողները։ 1—1

Գրիգոր եւ Թագուհի Տեր-Ղեւոնդեանցներ ուղեւորացան՝ Անգնա, Տիգրան, Անուշաւան եւ Մարիամ, ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինները իրանց որդու, վերջինները եղբօր՝

ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ, հինգշաբթի, յունվարի 26-ին, երեկոյեան ժամը 7½-ին։ Յուղարկաւորութեան հանդէսը տեղի կունենայ իր բնակարանից՝ Աւչալսկայա փողոց, սեփական տուն, № 36, դէպի Վանքի աւագ եկեղեցին, կիրակի, ամսի 29-ին, առաւօտեան 10 ժամին։ Ամբիծքը շաբաթ, յունվարի 28-ին, երեկոյեան ժամը 5½-ին։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

Ըստ նայելով որ յունվարի 20-ին լրացաւ ժամանակաւոր գիներալ-նահանգապետի առուած ժամանակամիջոցը, ոչ բոլոր տանտէրերը հոգ տարան գունապներ վարձելու. այդ պատճառով քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում նախազգուշացնել, որ այն տանտէրերը, կապալառուները և անձերի կառավարիչները, որոնք այս յայտարարութիւնը հրատարակելուց 3 օրվայ ընթացքում գունապան չեն վարձի, ԿԵՆԹԱՐԿՎԵՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՒՈՒԹԵԱՆ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցանկանում ենք աջողութիւն. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Տեղեկութիւններ գաւառից. Մաքր և փոստեր. Միտքը քարացել է. Հաշտութիւնը Շուշում. Հայ-Թուրքական ընդհարումների առիթով. Վահան Մամիկոնեանի խօսքը. Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութիւնը Կովկասեան երկրում. Մի յայտարարութիւն. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։

ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Հայերին և Թուրքերին հաշտեցնելու համար Պետերբուրգից մեզ օտ են գալիս հայ և Թուրք ուսանողներ։

Այսպէս է ասում գործակալութեան հեռագիրը։

Հայ և Թուրք ուսանողները, զգալով հայ-Թուրքական ընդհարումների կործանիչ էութիւնը և երկու ազգերի համերաշխ հարևանական գոյութիւնի անհրաժեշտութիւնը, գալիս են իրանց հայրենակիցներին ասելու, թէ իրանք ոգեւորված են մի խոր համոզումով, որ հայերը և Թուրքերը պէտք է հաշտութեան ձեռք մեկնեն միմեանց և դադարեցնեն եղբայրաւալ կռիւները։

Ողջոյն ձեզ, երկու ազգերի ուսանողներ։ Յարգանք այն ոգևորութեան, որով դուք գալիս էք նպաստելու մեծ և շինարար գաղափարի իրականացման։

Մեր համակրութիւնը ձեր կողմն է, մեր յոյսը այն գաղափարի ոյժի վրա է, որ այսօր ձեզ միացրել է, իսկ ապագայում պէտք է միացնէ թէ երկու և թէ մեր հարևան մէլս ազգերին առաջադիմական և ստեղծագործական ընդհանուր գործունէութեան համար։

Մենք հաւատում ենք ձեր անկեղծութեան և ձեր մաքուր զգացմունքներին։

Սակայն պարզենք իրերի դրութիւնը և աշխատենք պատասխան տալ այն հարցին թէ ինչ դեր ունէք կատարելու։

Եթէ դուք կը կարծէք, թէ այստեղ հաշտարարութեան և հարևանութեան պահանջների մասին ամենալուրջ կերպով չեն խօսել մինչև ձեր գալը—սխալված կը մնէք։

Խօսել են, խորհրդակցել են, ճառել են, քարոզներ են կարդացել և ոչ միայն ոչ մի բարերար հետևանքի չեն հասել, այլ որ աւելի սոսկալին է և ցաւալին, հասել են այն յուսահատական եզրակացութեան, որ այդ խօսքը, ճառը և քարոզը միայն ծաղր են մեր իրականութեան վրա։

Արդարև, մարդիկ օրերով, շաբաթներով և ամիսներով ժողովվում էին, խորհրդակցում և պայմանաւորվում այն միջոցների մասին, որոնցով պէտք է աւաջն առնել ամեն տեսակ թիւրիմացութիւնների և ընդհարումների։ Եւ յանկարծ մի օր, մի չարագուշակ օր, հրաւակոմիտէները կազմակերպված շարքերով, անթիւ պատգամաւորներով, լիառատ ռազմամթերքով, պատրաստի սայերով և բեռնակիրներով յարձակվում էին հայերի վրա, ապատակում, սպանում, աւերում և բարձելով կողոպուտը սայերի վրա, հեռանում իրանց գիւղերը։

Յիշեցնենք մի շատ ընորոշ դէպք։

Երբ Թիֆլիսում սկսվեցին հայ-Թուրքական յուզումները և ապա ընդհարումները, սօցիալ-դեմոկրատները կշտամբանքով դիմում էին հայերին և Թուրքերին ասելով, որ չը պէտք է զէնք բարձրացնել միմեանց վրա, այլ հաշտութեան ձեռք մեկնելով միմեանց, ամրացնել ազգերի եղբայրակցութեան գաղափարը։

—Մենք բոլոր ժամանակը այդ փորձերով ենք զբաղվել, պատասխանում էին հայերը, բայց չենք հասել բարերար հետևանքի։ Թուրքերը խոստմնազանց են եղել և խախտել են բարի հարևանութեան պայմանները։ Այժմ էլ պատրաստ ենք հաշտութեան, բայց մեր դէմ կանգնած են ապատակողներ, որոնք ուրիշ դրդումներ ունին։

—Դուք լաւ չէք աշխատել, դուք լաւ չէք փորձել, յայտնեցին սօցիալ-դէմոկրատները։

Եւ որպէս զի ապացուցին, որ հայերը բաւականաչափ համոզեցին և համոզեցուցիչ կերպով չեն խօսել Թուրքերի հետ, վրդովեցին իրանց վրա վերցնել այդ առաքելութիւնը։

Եւ փորձեցին։

Անկասկած, այդ փորձը պատիւ է բերում սօցիալ-դեմոկրատների զգացմունքներին և ներքին հաւատին դէպի գաղափարի յաղթանակը։

Բայց անաջողութեան հանդիպեցին և այն էլ չափազանց ծանր անաջողութեան։

Նրանց խօսքերը ծաղրի ենթարկվեցին, իսկ նրանց յորդորներին պատասխանեցին հրացանների համազարկերով։

Ընկաւ սօցիալ-դեմոկրատներից մէկը, վիրաւորվեցին մէւս երկուսը։ Վանքի ենթարկվեց մնացած սօցիալ-դեմոկրատների կեանքը։

Մեծ էր հիասթափութիւնը։ Բայց և կրիտիկական էր բօվէն։

Ի՞նչ անել։

Արդեն այն, ինչ որ սօցիալ-դեմոկրատներից առաջ անում էին հայերը, երբ կորցրին ամեն վստահութիւն դէպի Թուրքերը։ Նրանք ստիպված եղան խախտել իրանց նախկին որոշումը և Թուրքական հարուածներին պատասխանեցին հրացանների հարուածներով,

Թուրքերը կորուստներ ունեցան և յետ քաշվեցին։

Այդպէս վերջացաւ խաղաղութեան և հաշտութեան քարոզների ամենագունաւոր փորձերից մէկը։

Եւ եթէ լաւ ուսումնասիրէք մեր երկրի զանազան տեղերում կատարված դէպքերը, դուք կը տեսնէք, որ շատ և շատ անգամ ամենամեծ հաւատը դէպի համերաշխութեան գաղափարի յաղթանակը ոտի տակ է ընկել և որոշվել է այն պատճառով, որ Թուրքերի կողմից չէ եղել նոյնպիսի պատրաստակամութիւն և բուռն ցանկութիւն պահպանելու դրացիական համերաշխութիւն։

Մենք լաւ գիտենք որ Թուրք ամբոխի համար վերջի վերջոյ շատ վնասակար և քայքայիչ են հայ-Թուրքական ընդհարումները, որ նա շատ երկար տարիներ պէտք է զգայ իր արարքների սոսկալի վնասները. բայց իրականութիւնը իր բոլոր սև կերպարանքով իբրև մի ապառաժ կանգնած էր մեր առաջ։ Անկասկած՝ այդ ապառաժը ժամանակով պէտք է կործանվի և փուլ գայ. բայց քանի որ նա կայ, նրան անտես առնել չէր կարելի։

Սակայն մի՞թէ ելք չը կայ։ մի՞թէ պէտք է յուսահատվել և թողնել հաշտութեան գործը։

Ոչ և ոչ։ Ոչ մի դէպքում։

Ընդհակառակը. պէտք է ամեն ջանք գործ դնել կարելիին չափ շուտով ձեռք բերելու այդ հաշտութիւնը, որպէս զի թէ հայ և թէ Թուրք ժողովուրդը կարողանան նուիրվել իրանց առօրեայ կեանքի խաղաղ աշխատանքին և հնար ունենան ապատելու իրանց կեանքը և տնտեսութիւնը վերջնական օրհասից և քայքայումից։

Դուք ուսանողներ, եկել էք նպաստելու ձեր կողմից խաղաղութեան գաղափարի իրականացմանը։

Ձեր առաքելութեան ամենամեծ ոյժը հէնց այդ առաքելութեան փաստի մէջն է։ Մեզ պակասում էին Թուրք ինտելիգենցիայի այնպիսի ներկայացուցիչներ և խմբեր, որոնք անկեղծ կերպով նուիրված լինէին հայերի և Թուրքերի մէջ համերաշխ և բարի դրացիական յարաբերութիւններ ստեղծվելուն։

Դուք խօսել, խորհրդակցել և համոզվել էք, որ պէտք է անկեղծ զգացմունքով նուիրվել գաղափարին և նրան իրագործել։ Մենք կը ցանկանայինք, որ ձեր այդ անկեղծ հաւատը և վստահութիւնը դէպի միմեանց կարող լինէր ոգևորել աւելի ևս մեծ խմբեր և գառնային ոյժ ուժեղ գործօն փրկարար հետևանքների համար։

Մենք սպասում էինք անհամբեր անկեղծ և մաքուր խմբակցութիւնների։ Եւ եթէ յանձին ձեր մենք ունինք համերաշխ հայ-Թուրքական ինտելիգենցիայի թէկուզ մի փոքր խումբ, մենք ողջունում ենք այդ երևոյթը, ցանկանալով, աջողութիւն։

Դա մեր բոլորի իղձն է։

Ձեր արածը, միանալով ուրիշ կարևոր գործողութիւնների հետ, կը նպաստեն հասնելու մեր ընդհանուր նպատակին։

Տուէք ձեր երիտասարդական ոգևորութիւնը և ներշնչեցէք, ուր կարող էք, համերաշխութեան գաղափարի փրկարար զգացմունքները։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ղազախ

Փոխադարձ յարձակումները շարունակվում են։ Այրվում է Միլլքումը։ Սպասվում է գործ Օքսիզլուի մօտ։ Թուրքերը փորձ արին յարձակվելու մի հայ գիւղի վրա, բայց վարչութեան ներկայացուցիչը ազէտի առաջն առաւ և զօրքը արգելք եղաւ յարձակման։

—

Շուշի, 27 յունվ. 10 ժամ 36 ր.

Այս գիշեր այստեղ միաժամանակ կատարվեցին խուզարկութիւններ տներում և կալանաւորվեցին մի քանի անձեր։

—

Մի ծերունի, որ ազատվել էր Բաքու գիւղից և սարերով եկել մինչև Բարվանարա և ապա Թիֆլիս, յայտնեց մեզ հետևեալը.

«Բաքու վերադառնալը մեզ համար շատ դժուար կը լինի, որովհետև մեզ ՀՀՇապատասխանները բոլորն էլ Թուրքեր են, այժմ մեզ հետ թշնամացած։ Մեր հարեւան կալուածատէր Զիւլգադարովը, եթէ հատատ ցանկութիւն ունենար մեզ պահպանելու, մենք ապատ մնացած կը լինէինք աւերից։

Բաքվի հողը հազուագիւտ հողերից մէկն է իր պտղաբերութեամբ։ Նա հայ գիւղական համար բաղդաւորութեան տեղ կը լինէր, եթէ ՀՀՇակայ գիւղերն էլ հայկական լինէին, օրինակ Իրմաշլու, Թաթար, Իւխարի Այիվլու Թուրք գիւղերը։

Մեզ պէտք է օգնել, ապահովելով մեր վիճակը։ Եթէ անկարելի լինի մեր վերադարձը դէպի մեր գիւղը, պէտք է մեզ տալ ուրիշ գիւղատեղ։ Գուցէ կարելի կը լինի հողի փոխանակութիւն անել Թուրքերի հետ ձեռնտու պայմաններով երկու կողմերի համար էլ։

Դարունը մօտ է և հոգացողը պէտք է հոգայ շուտով։ Վարուցանքի ժամանակը մօտենում է։

Եթէ մենք ցանքս չանենք ու հաց չունենանք, ով պէտք է կարողանայ մեզ պահել հետևեալ տարին»։

—

Բարանա գիւղ, Ղազախի գաւ. 24 յունվ.

Ամսոյս 20-ին ղզըլ-հաշլուեցի 15 Թուրքեր զինված, երկու սայլի մէջ խոտ ածած գնում էին դէպի հայ գիւղերը Թալանի կամ այլ չար նպատակով։ Երբ հասնում են Կոնեն հայ գիւղին, պահապանները նրանց հարցնում են թէ ուր էք գնում։ Նրանք պատասխանում են, որ խոտ բերելու են գնում։ Բայց հայերը հասկանում են նրանց չար միտքը և արգելելով ճանապարհը հարց տալիս, թէ ի՞նչ կարիք կայ երկու սայլ խոտի համար 15 հոգով գնալ։ Թուրքերը տեսնում են, որ հայերը հասկացան իրանց միտքը, իսկոյն հանում են խոտի տակից պահած հրացանները և սկսում կրակել հայերի վրա, որից մի հայ սպանվում է և երկուսը վիրաւորվում։

Հետեւեալ օրը Թուրքերը շրջապատում են Կոնեն, Աշրդ-Գեղ և Զօղազ հայ գիւղերը և սկսում այրել, թալանել և տանել բոլոր ոչխար ու տաւարը։

Հետանքը լինում է այն, որ այս և այն կողմից հաւաքվում են հայերը և փոխարէնը Թուրքերին լաւ պատժում։ Այրում են՝ Ղզըլ-Հաշլու, Մազամլու, Փարաքլու և Բաղանիս այրումների գիւղերը. կռիւը շարունակվում է. Թուրքերի կորուստը շատ է. դրանց մէջ են անցեալում 9 այրված հայերի սպանողներից երեքը։

Ա. Տէր-Խաչատրեանց

—

Բօրչալուից եկած մի անձն, մանելով երէկ մեր խմբագրատունը պատմեց հետևեալը.

Թուրքերը պատրաստութիւններ են տեսնում յարձակում գործելու Կօրնչուկ հայ գիւղի վրա։ Թուրքերը այն գիւղերից են, որոնք ունեն ընդհանուր Զանգեզուրի անունը։ Կօրնչուկ հայ գիւղում էլ խմբված են Դումանիսի, Վարդիսուրանի և Բօսլեղի հայերը։

Շարժառիթը հետևեալն է։

Զորս օր սրանից առաջ Դումանիս գիւղի պահապանները իրանց գիւղի հողերում տեսնում են անցնելիս մի Թուրքի գիրքոն։ Հարցնում են թէ ովքեր են։ Թուրքերը փոխանակ պատասխանելու, հրացաններ են պատրաստում հայերի վրա։ Հայերն էլ կրակում են նրանց վրա, սպանում են մէկին և վիրաւորում միւսին, երրորդ Թուրքը փախչում է և իմաց տալիս պրիստաւին։

Հայերը տանում են գիրքոնը դէպի մօտիկ Ղազացը և պահ տալիս Ղազացպատնին։ Երբ պրիստաւը գալիս է ամեն բան ստանում է Ղազացում։

Դրանից յետոյ Թուրքերը վճռում են յարձակվել հայերի վրա։ Այդ պատճառով վերև յիշած գիւղերի հայերը խմբվել են Կօրնչուկ գիւղում։ Վրացիները յոյս ունենն, որ Թուրքերը իրանց չեն վնասիլ։

—

Կովկասեան փոխարքային գներալ Գիւլչաչովը հեռագրում է Շուշուց, յունվարի 22-ին։ «Պարաք եմ համարում յայտնել Ձեզ պայծառատեսլութեան, որ մի քանի թերթերում հաղորդվում են ստայգ տեղեկութիւններ իմ հրամանատարութեան յանձնված զօրամասերի գործողութիւնների մասին. իսկ մի տեղեկութիւն հաղորդված է մինչև իսկ առաջուց. նա տպագրված է Թիֆլիսի մի թերթում այն օրվայ գիշերը, երբ Շուշու մօտ արդարև զօրախումբը գործել է, և հաղորդված է այնպիսի գործողութիւնների մասին, որպիսին զօրախումբը չի էլ արել։ Հաղորդած տեղեկութիւնները գաղելի ամբաստանութիւններ են։ Կը հեռագրեմ ոստիկանութեան գլխաւոր կառավարչին յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկելու։ Ես հաղորդել եմ Ձեզդ պայծառատեսլութեան լոկ զուտ իրողութիւնը և գործում եմ, առանց դուրս գալու ինձ տուած հրամանի շրջանակներից, անաչառութեամբ, միատեսակ վերաբերվելով երկու կողմերին։ Ով կասէ դրա հակառակը, դա արդէն սուտ կը լինի»։

—

Յունվարի 23-ին

Թուրքերը չը հասան իրանց նպատակին. նրանք բաւականացան միայն օգը ռմբակոծելով... Զոհեր չը կան. գիշերվայ 11-ից յետոյ խաղաղ անցաւ, քաղաքը մեռելային տեսք ունի, ձիաքարշը բանում է, խանութները «մէջ ու մէջ» բաց են, մարդիկ քայլում են կատարեալ անվստահութեամբ, ամեն մէկը գտնվում է իր որոշ դերի մէջ...

Տատանվող անվճռականութիւն է թագաւորում մեր շուրջը, անծայր կմախքների մի շարք ենք, խրտնած հորթերի նման... լռութեան փիլիսոփան է տարամարանում մեր մէջ, ամեն մէկս մեզ համար մի մի մեռացող տիեզերք ենք, սակայն իրար հակառաջ... Պատմում են, որ իբր թէ Ցաղէվը «մէջոցներ» է ձեռք առել, որի համար և քաղաքը կոզակներով լիքն է... բայց Թուրք գիպլոմատները հերքում են այդ լուրը, և ամեն ինչ վերագրում բայրամին. նրանց կարծիքով՝ դա մի յառաջարան էր կեանքի նոր երեկոյի, որի վրա չարժէ այնքան էլ ծանրանալ... սակայն ինչին վերագրել մեր Թուրք նարեանների այդքան առատաձեռնութիւնը, փամփուշտներ շռայլելու մէջ... Անորոշ տարածութեան վրա մահն էր գերիշխում. երէկ երևկոյեան քաղաքը ամբողջապէս հեռւմ էր գնդակների տարափի տակ, իսկ այսօր... — զարմանալ ժպիտներ նոյն անվերջ հանդիսատեսութեամբ. երանց է...

Ա. Զանոնաց

—

Կարայազի գաւառամասն է գնացել մի առանձին մասնաժողով որոշելու հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ հայերի կրած վնասները։ Մասնաժողովի անդամներն են հաշտարար միջնորդ Բուլնաչով, արքունական հողերի ու արօտատեղիների կառավարիչ Կուպչիկօ, գաւառապետի օգնական Զօնսէնսկի և ուրիշներ։ Հայերին հասցրած վնասները որոշել են 600 հազար ռուբլի։ («Кав.»)։

—

Ինչպէս յայտնել էինք իր ժամանակին՝ հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ Նօվո-Իվանովկա և Նօվո-Սարատովկա գիւղերի մալականները Թուրքերի հետ միասին թալանում էին հայերի գոյքը։ Այդ բանը պարզելու համար Թիֆլիսի ազանդաւորները այնտեղ ուղարկեցին մի մասնաժողով քննելու այդ մեղադրանքները։ Այժմ «Тифлисскій Листокъ» թերթի հաղորդելով, նոյն մասնաժողովը կատարելով իր վրա դրած յանձնարարութիւնը, յունվարի 24-ին վերադարձել է Թիֆլիս, և կիրակի օրը յունվարի 29-ին, Սաղի վրա գտնվող աղթատանը նշանակված Թիֆլիսի ազանդաւորների միացեալ ընդհանուր ժողովում (մօլոկանների, դուխոբորների և բապտիստների) կը կարդայ իր զեկուցումն այդ մասին։

—

Բօրչալուի գաւառի եկատերինենֆելդ գաղութից հաղորդում են, որ տեղական Թուրքերը սաստիկ զինվում են։ Նրանք միաժամանակ խուզարկում են ճանապարհներով անցնող գիւղացիներին զէնք գտնելու նպատակով։ Մօտ օրերս մեզանում Թուրքերը խուզարկեցին մօլոկանների չորս փուրգոններ, բայց զէնք չը գտան։ «Кав.»

—

ԴԷՊԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Մինչև այժմ յայտնի չէ թէ ով սպանեց պոլիցիական պրիստաւ Բոբուլեանին։ Այդ լուրը սարսափեցրեց հասարակութիւնը, որովհետև լուր տարածվեց, թէ կոտրած են ականը։ Գեներալ Ալիխանով հրաման է արձակել, որ անմիջապէս գտնեն սպանողներին։ Քութայիսում պաշարման դրութիւն հրատարակվեց։ Քութայիսի բնակիչների վրա 10,000 ռուբլի տուգանք դրեցին և անմիջապէս ըսկսեցին հաւաքել։ («Ցեօբիս-Փուրցելի»)։

—

«Нов. Время» լրագիրը պնդում է, որ Քութայիսի նախկին նահանգապետ Ստարոսելսկին և Ղիփիշեի մեղադրութեան մասին անհերքելի փաստեր են ժողովված։ (Ց. Փ.)։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆԱՁԱԿԻՑ

—

Գանձակ, յունվարի 20-ին։ Սարով գիւղը յաճախ ենթարկվում էր շրջակայ գիւղերի Թուրքերի յարձակման, որոնք կոտրատում էին այգիները, այրում էին խոտ ու գարմանը և այլն։ Սարովցիների գանձատները և խրճիթները տեղական ազգաբնակչութեան կողմից մնում էին առանց հետևանքի։

Երբ, դեկտեմբերի 17-ին Սարով գիւղը շրջապատվեց մի քանի հազար Թուրքերով, այն ժամանակ գներալ-նահանգապետ Ցիլչերի կարգադրութեամբ ուղարկվեց 2 էսկադրոն նիժեգորոդեան գնդից օգնելու սարովցիներին տեղափոխվելու Թալըշ գիւղը։ Բայց որովհետև Թալըշ գիւղը փոքր լինելու պատճառով, չէր կարող իր մէջ բնակեցնել 300 ընտանիք, այդ պատճառով նրանց կէս մասը ցրվեց Գանձակի գաւառի զանազան գիւղերը։ Սարովցիներն էլ հնարաւորութիւն չունեն վերադառնալու իրանց հայրենի հողը, ուր ունէին քարից շինած տներ (մեծ մասամբ երկյարկանի) այգիներ, պարապում էին շերամապահութեամբ, բամբակագործութեամբ, հողագործութեամբ։ Դա Զիվանշիրի գաւառի ամենահարուստ և ծաղկած գիւղերից մէկն էր։ Նիժեգորոդեան գնդի շնորհիւ ազատված են հազարաւոր մարդիկ և խաղաղ բնակիչների զոյքի մի մասը։ Միևնոյն ժամանակ Թուրքերը կապել էին ջրի արխը և թէ գիւղի բնակիչները, թէ գօրքը մնացել էին առանց ջրի։ Օֆիցէր Շամիլովը 15 դրագունների գնացել էր ջուրը բաց թողնելու, բայց համեմատելով կալուածատէր Զամիլինսկու տան մօտ, և տեսնելով բազմաթիւ զինված Թուրքերի՝ օֆիցերը յայտնեց, որ իր ճանապարհը չի շարունակի, մինչև Թուրքերը չեն զինաթափվի, չեն ցրվի։ Զամիլինսկին և տեղական ատուաւորը տալով օֆիցերին 5-6 հրացան, յայտնեցին, որ հեծելազօրքի հետ ոչինչ չի պատահի և կարող են հանգիստ շարունակել ճանապարհը։ Զանցած մի փոքրիկ տարածութիւն, զօրքի յետևից սկսեցին կրակել։ Այդ ժամանակ օֆիցերը զայրանալով կալուածատէր Զամիլինսկու վրա, գնաց Սարով գիւղը էսկադրոնի և թնդանօթի յետևից։ Այդ ժամանակմիջոցում Զամիլինսկին կարողացաւ հասնել Թառքար, Տէրտէր, և բերել այնտեղից զաւառապետ Պիսմարօվին։ Օֆիցեր Շամիլովը վերադառնալով Սարովից էսկադրոնով, հանդիպեց Զամիլինսկու կալուածից ոչ շատ հեռու տեղական Թուրք պրիստաւին, որը յայտնեց օֆիցերին, թէ գաւառապետը գտնվում է կալուածատէրի մօտ և խնդրում է թէչի։ Օֆիցերը, զայրանալով, պատասխանեց, որ նա չէ եկել իբրև հիւր։ Մի Թուրք դռան մօտից հրացանը ուղղեց դէպի օֆիցերը, բայց զինուորը բռնեց Թուրքին, օֆիցերն էլ վրա հասաւ և Թուրքի ձեռքից հրացան խլելու ժամանակ, օֆիցերի ձեռքը վիրաւորվեց։ Օֆիցերը, մօտենալով պատչամբին, յայտնեց գաւառապետին, որ ինքը մտադիր է կալանաւորելու կալուածատիրոջը և գիւղի ռուս տէրին։ Գաւառապետը պատասխանեց, որ երկուսն էլ անյայտացել են և դժուար է նրանց գտնել, իսկ ինքը նստել էր պատշգամբում թէչի բաժակը և մի շիշ օղի առաջին։ Այդ ժամանակ մօտ վազեց մի զինուոր, և ասաց, որ մի Թուրք գիւղերից մէկի ձեռքից խլեց հրացանը և անյայտացաւ։ Իսկոյն օֆիցերը կոզակների հետ շտապեց Թուրքի յետևից, և հասնելով, վիրաւորեց Թուրքին, որը իջնելով ձիուց, հրացանը ուղղեց դէպի օֆիցերը։ Վերջինս նոյնպէս իջնելով ձիուց հրացանը ուղղեց դէպի Թուրքը։ Ցանկարծ ձին քաշեց սանձը օֆիցերը վայր ընկաւ։ Կոզակը մօտ վազեց։ Թուրքերը կրակեցին և սպանեցին կոզակին։

Մութը ընկաւ և զրագունները ստիպված եղան վերադառնալ Սարով։ Գաւառապետը չէր ազակցում, և մինչև այժմս թէ կալուածատէրը և թէ գիւղական ատուաւերը չեն ձերբակալված։

Յունվարի 1-ին և 4-ին Թուրքերը յարձակում գործեցին Կարաչինար գիւղի վրա, բայց յետ մղվեցին։ Առաջին յարձակման ժամանակ սպանվեց 1 հայ և երկուսը վիրաւորվեցին, իսկ 2-րդ յարձակման ժամանակ սպանվեց 1 հայ և վիրաւորվեցին 3 հոգի։

Ասում են, որ յարձակվողների հետ եղել են երկու կառքով բէկեր, որոնց Թում գտնվում էին կալուածատէր Զամիլինսկին և 3-րդ մասի պրիստաւը։

Ե. Մ.

—

Եկատերինենֆելդ, 23 յունվարի։ Եկատերինենֆելդ գիւղի գերմանացիները կարեկցութեամբ վերաբերվեցին Կիանէթ գիւղի

հայ թալանվածները, հաւաքեցին թշուառների համար փող, ցորեն, գարի, գետնախնձոր և այլն և յանձնեցին գժբախտացածներին։ Մեր հարեան գերմանացիների այդ բարի վարմունքը արժանի է շնորհակալութեան։

Մենք յայտնել էինք «Մշակի» ընթերցողներին Բօրչալուի գաւառի հայ գիւղերին հասած սարսափելի գժբաղդութեան մասին։

Գաւառապետ Բեազմովը ընդհանրապէս առնչուում է երեւում, բայց աշող գործակիցներ չունի. նա կարողացել է վերադարձնել կողոպտած իրերի մի փոքր մասը միայն։

Դեկեմբերի 21-ին մենք ութի ունեցանք գաւառապետի հետ գնալու Բաշքեչիու։ Գաւառապետը թուրք գիւղերով անցնելու հրամայում էր վերադարձնել հայերին թալանած և տարած իրերը։ Մեզ էլ համոզեց Ցալ Բաշքեչիսում և սանալ. իսկ պրիսաւ Զ. Զաւալովին հրամայեց հետևել գործերին, սանալ ապրանքները և վերադարձնել իրանց տիրոջ։

Թուրքերը իւրաքանչիւր գիւղից մէկ կամ երկու հոգի ուղարկեցին Հասան-բէկ Եզիդաբօվի մօտ, հարցնելու թէ արդեօք ապրանքները վերադարձնել թէ ոչ։ Պատասխանը եղել է թուրքերի ասելով, բացասական։ Այդ այցելութիւնից յետոյ թուրքերը դադարեցին իրանց կողոպտածը վերադարձնելուց։

Պրիսաւ Զաւալովը շատ թոյլ և հայատեաց մարդ լինելով չը հետևեց գործերին, թուրքերին ը ե գ ա մ ա դ չանելու, քեֆերին չը դիպչելու համար և մենք էլ մի ամբողջ ամիս զուր տեղը սպասելուց յետոյ հեռացանք, ոչինչ չը ստացած։

Այժմ ասում են պրիսաւ Զաւալովին հեռացրել է գաւառապետը և նրա տեղը նշանակել է ուրիշին։

Բօրչալու գաւառի թուրք ազգաբնակութիւնը մի ընդհանուր խնդիրը է տուել կառավարութեան, որի մէջ յայտնել է իր ամենանշանգնդ հպատակութիւնը գահին և ի միջի այլոց գանգատվել է հայ ջանֆիդաներից։ Բօրչալու գաւառում հայ խառնութիւն, գործարաններ թալանելուց, այրելուց, ոչնչացնելուց յետոյ, պատճառելով մի քանի միլիոնի վնաս, դեռ մի կողմ եմ թողնում այն, որ Բօրչալուից հազարաւոր թուրքեր էին գնացել Թիֆլիս թալանելու, սպանելու և կողոպտելու մտքով... գարձեալ հայերից են գանգատվում։ Հնազանդ հպատակութիւն յայտնելով կառավարութեան, գրանով Բօրչալուի թուրքերը, կարծես, այդ խօսքերի տակ կաշառում են բարձր իշխանութեան, որպէսզի ապագայում կատարած չարագործութիւնների համար չը պատժվին, թող են փչում կառավարութեան աչքերին։

Այդ խնդիրը, եթէ կարելի է այսպէս ասել, տալուց յետոյ, չէ անցնում եօթ օր Ղըզլ-քիլիսի, Գայլիանի թուրք գիւղացիները յարձակվում են Պօսլեպ հայ գիւղի հովիտների վրա, խլում 130 գլուխ ոչխար. արիւնհեղութիւն չի եղել, որովհետև հայերը չեն ընդդիմադրել, թոյլ լինելու պատճառով. ասում են ոչխարների մի մասը թուրքերը վերադարձրել են։

Այս երբորդ անգամն է, որ մեր խաղաղասէր հարևանները յարձակվում են Պօսլեպի վրա։

Հարկաւոր է, որքան կարելի է շուտ, Պօսլեպի հայերին գաղթել աւելի ապահով հայ գիւղերը, եթէ չեն ուզում միւս թշուառ հայ գիւղերի օրերը տեսնել։

Համամլուի, Սափարլուի, Մամշլուի և այլ մօտակայ թուրք գիւղացիները հաւաքված միասին գնում են Դումանիս և Վարդիսուան հայ գիւղերը քարուքանդ անելու։ Մօտենում են այդ գիւղերին և կրկին վերադառնում առանց համարձակվելու թէ ինչու. ոչինչ յայտնի չէ։

Կիսի

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXVII

Օգնութիւն պէտք է։

Ահա մի կոչ, որ ամեն օր սառնում է մեր լրագրերը և Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովը։ Մեր և հասարակութեան լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում այն հանգամանքի վրա, որ անցեալ տարի աշնան շատ տեղում վար ու ցանքս չեն արել, որ այս գարնան ևս շատ գիւղեր հնարաւորութիւն չեն ունենալու վար ու ցանքս անելու, հետևաբար, հենց մեծ պակաս սկսած շատ գաւառներում սով է սպասվում։ Անգին տնտեսութիւններ քայքայված են թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, ուտեստի անագին պաշարներ ոչնչացրած են։ Գիւղական հայ ժողովուրդը ինչ որ ունէր տնտեսած, սիրվված է եղել ծախսել ինքնապաշտպանութեան համար։ Շատ տեղերում նոյն իսկ վերջին կօպէյկները տուել են, վերջին տաւարը էժան ծախել են, որպէս զի կարողանան որ և է զէնք ունենալ ինքնապաշտպանութեան համար թուրքերի վայրագ յարձակումների դէմ։

Ուրեմն պէտք է որոնել ուրիշ աղբիւրներ, պէտք է դիմել այն աղբիւրներին, որոնք մնացել են դեռ չը շօշափված։

Իսկ այդպիսի աղբիւրներ կան։

Այդ աղբիւրները նախ՝ արտասահմանեան հայ բարգաւաճ գաղութներն են, օրինակ, Եգիպտոսի, Թալիցիայի, Մանչեստրի, Աւստրօ-Ունգարիայի. երկրորդ, մեր ազգային այն հաստատութիւններն են՝ կրթական և բարեգործական, որոնք խոշոր գրամագլուխներ ունեն, օրինակ, Ներսիսեան դպրոցը, Յովհաննեան դպրոցը, Էջմիածնի վանքը, Գետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիները, Նոր-Նախիջևանի ազգասանդը և Բարեգործական ընկերութիւնը, Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութիւնը, Բագուի հայոց Մարդասիրական ընկերութիւնը և այլն։ Այդ հաստատութիւններից մի քանիսը, օրինակ, Էջմիածնի վանքը, Ներսիսեան դպրոցը, վերջին երկու տարվայ ընթացքում, երբ նրանք զրկված էին իրանց գրամագլուխներից և եկամուտներից և պահպանվում էին ժողովրդի ինքնաբուխ նուէրներով, այժմ, երբ յետ են ստացել թէ գրամագլուխները և թէ երկու տարվայ տոկոսները, պարտաւոր են, իրրև հաստատութիւն, իրանց գումարների մի մասը, նոյն իսկ խոշոր մասը յատկացնել ստատպող և թշուառ ժողովրդին։

Դա բարոյական պարտաւորութիւն է, նոյն իսկ նուիրական։

Այդ մտքով, ինչպէս գիտենք, Վեհ. Կաթողիկոսը Հայաստեանի կօնդակներ է անձակել բոլոր այդ հաստատութիւններին։

Յուսանք, որ նրանք կը կատարեն իրանց բարոյական պարտաւորութիւնը, ինչպէս կը կատարեն և արտասահմանի ճոխ գաղութները՝ օգնութեան հասնելով Ռուսաստանի հայ ժողովրդին, որ այնքան յանախակի օգնութեան է հասել Թիւրքիայի և ուրիշ տեղերի հայ ժողովրդին։

Շահրիար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԱՐՀԻՑ

—

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ. Մանկական պարտէզ. Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար նօտաներով և նկարներով։ Թիֆլիս. Էլեքտրաշարժ տպարան «Հերմէս» ընկերութեան. 1905 թ. գինը—3 ր.

Ուղիղ տասն տարի է անցել այն օրից, երբ վերջին անգամ հայոց եկեղեցական-ծիսական ուսումնարանների դռները ամուր փակվեցին հայ մանուկների առաջ և ուսուցիչ ու աշակերտ անօգնական ցրվեցին փողոցներում, իրրև յանցաւորներ, որոնց պէտք էր պատժել անգիրբէն մայրենի լեզուով ուսանել կամ ուսուցանել յանդգնելու համար։

Մեծ ոճիրը կատարվեց... Կատարվեց լռելեայն, առանց նոյն իսկ ամենաթոյլ բողոքի գժբախտ զոհի կողմից, թէպէտ զոհը կրցնում էր գպրոցների հետ միասին իր ամենից աւելի թանգագին, ամենից աւելի գուրգուրած ու փայփայած բանը աշխարհս վրա։ Եւ զարմանալի էր չէր. ոճրագործը մի ձեռքով պիտի սեղմել էր զոհի կոկորդը, իսկ միւսով, հանգիստ ու ասերկիւղ, վստահ իր ոյժի ու ունակութեան վրա, կողոպտում ու յափշտակում էր նրանից այն իրաւունքը, որ, ըստ Եւրոպիթի, պէտք է անկողոպտելի համարվէր։

Տասը տարի—դա քիչ ժամանակ չէ մարդկային կարճօրեայ կեանքում։ Այժմեան դեռահասս սերունդը, որ անցուշտ չէ տեսել հայ տարրական ուսումնարանի երես, երեւակայել անգամ չէ կարող, թէ ինչպիսի եռուն կեանք, ինչպիսի աշխոյժ գործունէութիւն էր տիրում այդ, ըստ արտաքինի, «խղճուկ» գպրոցներում, որոնց և զարդն, և գեղեցկութիւնն, և հմայքը մի բան էր միայն—անդիմադրելի ձգումն դէպի գիտութիւն և առաջադիմութիւն, անսահման սէր դէպի մայրենի լեզուն և բուռն ոգեորութիւն դէպի հայրենի անցեալ ու ապագան։

Եւ այդ փոքրիկ, «խղճուկ» գպրոցները ոչ միայն ապրում էին իրանք կուլտուրական խաղաղ աշխատանքի բեղմնաւոր, գործունեայ կեանքով, այլ նոյն կեանքով ապրեցնում էին նաև ամբողջ հայ հասարակութիւնը, հայ մտաւորը, և հայ գրականութիւնը...

Գաւառական քաղաքներում և գիւղերում հասարակական կեանքը պտոյտ էր գալիս գպրոցների շուրջը։ դա մի կախարդական նիւթ էր, որով վերջանում կամ սկսվում էր ամեն մի խոտկցութիւն։ ուսուցիչ, աշակերտ, աշակերտուհի, գպրոցական շնորհութիւն, գրական երեկոյթ, ուսուցում, ներկայացում, ծնողական ժողովներ—ահա թէ ինչով ապրում ու շնչում էր գաւառը, ահա ինչու մասին էր անընդհատ հոգում ու մտածում նա։ Սրա հետ միասին պարբերական մամուլը լիքն էր մանկավարժական յօդուածներով կամ գպրոցական կեանքի բազմաթիւ երևոյթների նկարագրութիւններով, իսկ գրականութեան մէջ անընդհատ, մէկը միւսից յետոյ, լոյս էին տեսնում մանկական ընթերցանութեան գրքեր, մանկավարժական գրուածներ, ամսագրեր, գասագրքեր. կազմվում էին ծրագիրներ գպրոցական գործի բարգաւաճման համար, տեսնվում էին լաւագոյն երգեներ...

Եւ այս ամենը մի օր լռեց ու ոչնչացաւ... Բռնութեան թանձր խաւը ջնջեց ամենքի կրծքին... և ամենից աւելի ծանրացաւ հայ ուսուցչի և հայ մանկավարժի վրա։ Յուսահատ հովիտներ՝ որոնց հօտը ցրվել էին, իրանք ևս ցրվեցին աշխարհի չորս կողմը և կորան աչքից ու մտքից...

Հայոց քաղաքներում և գիւղերում կեանքը հանգաւ միանգամից. կախարդական առանցքը դադարեց պտտվելուց. ամեն ինչ ամայացաւ. իրար ետևից գալիս ու գնում էին միայն դատարկ, տխուր, անլոյս օրեր։

Անտանելի օրեր։

Եւ այսպէս տասն տարի։

Բայց, երևի, մեծ է հայի Աստուածը, թէկուզ... նրա մեծութեան ապացոյցները մենք տեսնում ենք քիչ, շատ քիչ դէպքերում միայն... Այս անգամ հայի այդ զանազան Աստծու օգնութեամբ բռնութիւնը վերջ ի վերջոյ կորցնեց ինքն իրան և նրա ամբարտաւան շնչի աւերակների տակից նորից յարութիւն առան մեր գպրոցները։

Յարութիւն, որ մեզ համար թերևս աւելի մեծանշան և խորհրդաւոր է, քան նոյն իսկ Քրիստոսի յարութիւնը...

Հայի չարանենգ բախից՝ տասնամեայ թաղված յարութիւնը կատարվեց այնպիսի օրերում, երբ անհնար էր «ոչ փող հարկանել և ոչ ոտն կատարել»։—չորս կողմը արիւն էր հոսում...

Բայց և այնպէս կեանքն անտարբեր չը մնաց դէպի թանգագին վերածնվածը. մեր մտաւոր կենտրոններում կազմվեցին ժողովներ, առաջարկվեց նոր ծրագիրներ, ընտրվեցին մանաւորեալ գպրոցների ապագայ լաւագոյն կազմակերպութեան վրա խորհելու համար. իսկ փոքրիկ քաղաքներում և գիւղերում, արիւն ու կրակի միջից մարդիկ մի բօպէ դուրս գալով, հաւաքվում ու մտածում են հին ու նոր գրպրոցների բացման մասին...

Այո, արիւն ու կրակի մէջ անգամ հայը չէ մոռանում իր մեծ հոգսը. նա զրում է, որ գպրոցի մասին պէտք է մտածել նոյն իսկ այն ժամանակ, երբ հեռուից լսվում է յարձակվող թուրք խուժանի ահաւոր աղաղակը, երբ զենքից ու օրհասական կուլից զատ՝ ամեն ինչ, բան երևոյթին, պէտք է մոռացված ու արհամարհված լինէր։

Սա այնպիսի անզուգական փաստ է մեր ազգային—մտաւոր կեանքում, որ կարող է հպարտութեամբ լցնել ամեն մի հայի սիրտ, հպարտութեամբ, որ ոչ մի անհնութիւն չունի մտաւորութեան հետ։

Դարերց և զէնք—սա պիտի լինի այսուհետև հայի նշանաբանը, սա պիտի ոգեորէ այսուհետև ամեն մի հայ մարդու։

Դպրոց և զէնք—հրաշալի, չքնաղ երկուորեակ, մեկը դէպի լոյս, գիտութիւն, դէպի ազգային բարօրութիւն առաջնորդելու, իսկ միւսը, որպէս պահապան հրեշտակ, արթուն հսկելու հայ վաստակաւորի արիւն-քրտինքով ձեռք բերած մտաւոր և նիւթական հարստութեան անկոխրուտ պահպանութեան վրա։

Թող միայն տարբանան մեր մէջ այս ձգտումները, թող միայն, իրրև մարմին ու արիւն, անբաժան կապվեն նրանք մեր հոգու հետ, և հետևանքը—մտաւոր, բարոյական և նիւթական հարստութիւնը—շատ չի ուշանայ երևան գալու...

Եւ ահա այդ հարստութիւններից մէկը. նա արդէն դրված է իմ առաջ իր ամբողջ շքեղութեամբ։

ՄԻՏՔԸ ՔԱՐԱՑԵԼ Է

—

Երևան, յունվարի 20-ին

Մի քանի օր ևս և ահա տարին կը լրանայ այն օրից, երբ մի սոսկալի անէծք պայթեց Կովկասի գլխին, երբ անմեղ արիւնը սկսեց հոսել ջրից էլ առատ, հեղեղից էլ վարար, երբ զրացին զրացու վրա ձեռք բարձրացրեց և բարեկամը բարեկամի, երբ թուրքը սուրը մերկացրեց հայ գլխին, իսկ հայը ակամայ իր արիւնը խառնեց թուրքի արիւնը, և գեղեցիկ Կովկասը դարձաւ աւերի ու սրծութեան մի սոսկալի վայր։

Եղբայրասպան նզովքների այդ ճիւաղ կոիւը սկսվեց մի այնպիսի տեղ և այնպէս անսպասելի կերպով, որ նա սկզբում անքան էլ ահռելի չէր երևում, ինչպէս այժմ։ Նա փոքր էր երևում և կղզիացած՝ իր բացառիկ պայմանների մէջ, որպէս հակադիր շահերի մի հնոց, եթէ չը յիշենք այն զօրեղ տպաւորութիւնը, որ մենք ստանում էինք առաջին անգամ Բագուից հասնող արիւնալի օրերի նկարագրութիւնից։ Նա երևում էր նաև որպէս մի հատիկ երեսոյթ, որին վերջ գտնելը դժուար չէր. այդպէս թւում էր գոնէ այն ժամանակ ամենքիս։ Կռիւը պայթել էր Բագուում, բայց նա տասանորդումով էր ամենից և ամեն տեղից և նոյն այդ ժամանակ միւս տեղերի հայ ու թուրք ժողովուրդների կողմից ջանքեր էին լինում այդ անմիտ կռիւը խեղդել տեղն ու տեղ։ և չը թոյլ տալ տարածվելու նրա թոյնը միւս տեղերում ևս։ Այդպէս էր սկզբում, այո, որովհետև ազգը չէր ընդհանրացել, որովհետև միտքը գործում էր, տեղի ունէր սառը զատողութիւն, մտածողութեան արամաբանական ուղիղ ձև, որովհետև ազատ այժմեան համաձարակ ազգի կշռանդիներից, ընդհակառակն էինք հաշիւ տալ մեզ մեր երախտաւորները և որոշել չարիքների գոնէ ամ նախորդաղդը։

Սակայն հնարաւոր չեղաւ չարիքը խեղդել իր ընի մէջ, նա դուրս գրոթիկեց և որպէս համաճարակ մի ախտ, մի սոսկալի ժանտախտ տարածվեց Կովկասի շատ տեղերը, վարակելով թուրք տարրերին։ Գիւրին բարձրացրեցին այդ տարրերը համարեա ամեն տեղ, ուր նրանք հնարաւոր էին գտնում կողոպտելու մի տեղ և սպանելու։ Հայն էլ մարդ էր, նրա մէջ էլ կար ինքնապաշտպանութեան զգացմունք, գիմադրութեան ոյժ և նա ակամայից դուրս եկաւ արիւն թափելու, երբ թուրքը հային համարեց, որ նրա առաջ, որպէս միակ եղբ այդ ճանապարհն էր գրված։ Եւ թափվեց արիւնը երկու կողմերից համահաւասար։

Այնուհետև սկսվեց չը տեսնված ադեղը, անբնականալի աւերը մի տեղից անցնելով միւս տեղը, մի գաւառից տեղափոխվելով մի-ս գաւառը, մի նահանգից միւսը և մի շրջանից մեր շրջանը։ Յանկարծ ինչպէս մի շաբաթներ ու ամիսներ. շուտով մենք կը տեսնենք տարեդարձը այն սև ու անէծքների գէշագոյն օրվայ տարեդարձը, բայց դեռ ևս ադեղը չէ դադարել։ Կրկնվում է աւերը այսօր էլ աւելի մեծ չափերով, աւելի ագաւ, գլուխը շրմնցնելու չափ արագ յաջորդականութեամբ։ Կրկնվում է նա միանգամ տեղում մի քանի անգամ, գնալով լայնացնում է իր սահմանները։ Եթէ նա սկզբում տեղի տուէր մի քաղաքի կամ մի գիւղի խաղ ագրարկութեան մէջ, այժմ նա ասպարէզ է բերել գիւղամիջեր ու գաւառներ։ Եթէ նա սկզբում իրար վրա էր հանում միմիայն հարևան գիւղերը, այժմ գաւառներ են միմեանց վրա շարժվում և գնալով աւերն ու աւերածութիւնը մեծանում, ընդհանուր բնաւորութիւն կրում, համակովկասյան դառնում։

Տներ քանդվել են, գոյքեր հրդեհվել, գիւղեր աւերվել են, գաւառներ ամայացել և այդ սոսկալի աւերի առաջ կանգնած չեն յաղեցել մեր դաղանացած կրքերը և էլի լսում էք սոսկալի աղաղակը, որը արիւն է պահանջում և անմեղ արիւնը շարունակում է հոսել։

Եւ միտքը քարացել է։

Ինչպէս ամենաուժեղ, նոյն իսկ ցնցող տպաւորութիւնը անվերջ կրկնվելով կորցնում է իր ազդեցութիւնը և դառնում սովորութիւն, այնպէս էլ կոտորածն ու աւերը 12 երկար ու ձիգ ամիսներ շարունակ կրկնվելով կորցրել են իրանց ազդեցութիւնը և դարձել սովորութիւն, որի տակ մենք կորցրել ենք սառը դատողութիւնը, դատելու ընդունակութիւնը, մի խօսքով մեր միտքը քարացել է։

Այո, մեր միտքը—մեր բոլորիս միտքը քարացել է։ Սոսկալի ադէրը կաշկանդել է բոլորիս և գառանցանքների մէջ ձգել. և մենք գառանցում ենք անիմաստ բաներ։

Թուրքը գառանցում է արբեցած արեան ճապաղիքից, այրվածքների ճենճերանոցից շարունակելով ազազակել արիւն ու արիւն, ինչպէս զինուորը մի գլուխ ազազակում է օրի օրի, քանի նա դեռ ևս չէ քնել ու գլխատացել, և նա այդ արբեցած թուրքը, խելագարյաց ամբոխը արիւն ու արիւն ազազակելով հանդերձ չի կարողանում դատել, տեսնել որ այդ արիւնը իրանից էլ է հոսում, ինքն էլ արիւնաքամ է լինում ու ուժասպառ դառնում։ Նրա միտքը քարացել է, նրա մէջ ազազակում է միմիայն գազանը՝ մինոյն ժամանակ ծառաելով ու յոշոտելով ամենից շատ իր մարմինը։ Թող լինի. մենք համոզված ենք, որ հեռու չէ այն ժամանակը, երբ նա այդ զինեմոլը, վերջապէս թմրութիւն կըզդայ, կընկնի մի երկար քնի մէջ և ապա ուշքի կը գայ, կը զգաստանայ։ Հաւատում ենք, հիւսու չէ այդ ժամանակը։

Հայն էլ գառանցում է, բայց հայի գառանցանքն այլ էր, որի մասին, սակայն, կը խօսենք յաջորդ անգամ։

Ա.—Դօ

ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒՄ

—

Յունվարի 23-ին

Հաշտութիւն... Կարծես թէ մարդիկ առաջնորդների քարացած աշխարհից յարութիւն առած լինէին։ Դարկեր դէմքերով, նեղար, գունատ, թախծալից հայեացքը երևին՝ հայ ու թուրք իրար դէմ են երնում, ձեռք տալիս, համբուրվում, լալիս, արտասվում։ «Ինչ կրակի մէջ ընկանք. երկու հարան էինք, իրար վշտի վշտակից, իրար ուրախութեան ուրախակից։ Ո՞ր սատանան, որ սադրէլը քանդեց մեր արանքը, աւերից մեր տունը...»

Անկեղծ էին երևում, սրտաբուղ, սիրամարմոր այդ խոստովանութիւնները։

Եկեղի երանի, թէ մի այժ ամառարուռ ելեկաւ կանգնեց երկու կառապած, զարմացած հարեւանների գլխին և սեղմեց նրանց զայրոյթը, զարմանութիւնը։

«Թրանք արին, իրանք էլ հաշտեցնում են. մոօթ մեզ»։—Մա ամենայտեսին, ոգեա թուրքի բերանի խօսքն է, որով ակնարկ է ձգում պրօվոկատօր բուրգիրատիայի հայցէին։ Ո՞ր սատիան նրանց զատապարտել է խիղճը, ամենայնը, սոմամանութիւնը, որ այս զան խոստովանութիւնն ընդհանրացել իրականացել է բոլոր խաւերի մէջ։

«Մեր բէգերի ձեռքով էին անում ամեն բան։ Եթէ այսպէս շարունակվէր դրութիւնը, շատ չէր տեւի և մենք կը կոտորէինք նրանց։ Ադամում արդէն երես-երես են կանգնել և մի քանիսն իրար կոտորել...» Ահա մի այլ խոստովանութիւն։

Եթէ այսպէս է, հապա ի՞նչը սոիպեց կառավարութեան խստագոյն միջոցներով ճնշել երկու թշնամացած ցեղերին։

«Ես պահանջում եմ անպայման հաշտութիւն. չեմ լսում ոչ մի փաստաբանութիւն, չեմ ընդունում մարդկանց, չեմ կարդում բողոքներ, չեմ ճանաչում զատ-զատ ազգեր, չեմ թոյլ տալիս կեղծ թափօրներ և թող լարաք նրան լինի, որի կողմից կը լսեմ մի յարձակում, մի յանդգնութիւն, մի խօսք, որ խախտող լինի հաշտութեան...» Ահա գեներալ Գալոչկովի միսսիան, ահա նրա խօսքի սկիզբը և վերջը, նրա սկզբունքը, դատանքը։

Եւ մի՞թէ զոլութեան ու գոհութեան արժանի չէ։

Մի՞թէ անկեղծ չէ այս միսսիան։

Մի՞թէ մինչև այսօր եղած ու կատարված փիրուն հաշտութիւններն այսքան անկեղծ են թւացել մեզ։

Ո՛չ. մենք հաւատում ենք, ամբողջ սրտով հաւատում ենք և անթիւ անգամ կրկնել ենք, որ հաշտութիւն կը լինի այն ժամանակ, երբ կառավարութիւնը կը ցանկանայ։

Դա Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի «Մանկական պարտէզ» է։

Որքան հնարհակալ պէտք է լինել յարգելի հեղինակից, որ նա ընդհատեց մեր մանկավարժական գրականութեան տասնամեայ լռութիւնը և, իբրև մի աւետարար ծիծաղ, հանդէս եկաւ տասնամ մեր միւս մանկավարժներին. «արթնացէք—մօտ է գարունը»։

—

Մանկական պարտէզի և մանուկների նախագրպրոցական դաստիարակութեան գաղափարը նոր չէ մեզանում։ Դեռ անցած դարի ութսունական թեականների սկզբում տիկ. Ս. Բաբայեան և օր. Գ. Յովհաննիսեան եռանդով տարածում էին այդ գաղափարը և նոքին մէջ իրագործում նոյնը անձնական օրինակով։ Առանձնապէս մեծ է այդ ասպարէզում տիկ. Ս. Բաբայեանի աշխատանքը, որ պէտք է հարմարվի կովկասեայերիս մէջ առաջին հիմնադիր և քարոզիչ մանուկների նախագրպրոցական կրթութեան գաղափարի։ Որքան մենք տեղեակ ենք, առաջին մանկապարտէզը հիմնվել է Թիֆլիսում այս յարգելի տիկնոջ ձեռնարէգոնթեամբ և նրա զեկավարութեամբ պատրաստվել են բաւականաչափ դաստիարակչուհիներ, որոնք՝ ապա ցրուելով Կովկասի զանազան քաղաքները՝ բացել են սեփական և հասարակական մանկական պարտէզներ։

1882 թեականին կազմած ուսուցչական առաջին համաժողովի անդամները, երևի, դեռ չեն մոռացել այն փոքրիկ դասերը, որ տալիս էին մանկապարտէզի առարկաներից վերոյիշեալ երկու պիսէր-կանայք։ չեն մոռացել, երևի, նաև այն գեղեցիկ տպաւորութիւնը, որ թողնում էին համաժողովին մասնակցող ուսուցիչ-ուսուցչուհիների վրա տիկ. Բաբայեանի մանկապարտէզում սովորող փոքրիկ երեխաների մանկական սիրուն թոթովանքն և խաղերը։

Եթէ մեր ժողովրդական դպրոցները ռուս բիւրօկրատիայի վարչական քաղաքակնութեան ընորհիւ երկու անգամ ենթարկված չը լինէին «սպանութեան փորձերի», կասկած չէ կարող լինել, որ այսօր բազմաթիւ դպրոցների հետ միասին մենք կունենայինք, գուցէ, նոյնքան բազմաթիւ մանկապարտէզներ։ Սակայն այս վերջինների վիճակն անխզելի կերպով կապված էր հայ դպրոցների բաղդի հետ։ Ուր չը կար դպրոց՝ այնտեղ չէր կարող գոյութիւն պահպանել նաև մանկական պարտէզը—դպրոցի այս նախադուռը։ Բացի սրանից, չը գիտեմ ինչու, կովկասեան տեղական իշխանութիւնները մանկապարտէզներն ևս ենթարկելի էին համարում այն դրսեւնական օրէնքներին, որոնք հրատարակված էին հայ դպրոցների վերաբերմամբ։

Յիշում եմ ես այսպիսի փաստ. դպրոցների առաջին փակմանից յետոյ, 1885 թեականին, Ալեքսանդրոպօլի վարժուհիներից մէկը շրջանակում էր պահել իր մանկական պարտէզը։ Ալեքսանդրոպօլի ոստիկանական վարչութիւնը, իմանալով վարժուհու «անմեղների յանցանքը»՝ ոչ միայն փակից մանկապարտէզը, այլ նաև ենթարկեց նրան դատի և միայն շնորհիւ տեղական հաշտարար դատաւորի բարեմտութեան՝ «յանցաւոր» վարժուհին ազատեցաւ պատասխանատուութիւնից...

Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում տիկին Ս. Բաբայեանի և օր. Գ. Յովհաննիսեանի փայփայած գաղափարներն և ցանած բարի սերմերը չէին կարող աջողութեամբ տարածվել ու զարգանալ. բայց և այնպէս նրանք չը մոռացվեցին. և չը մոռացվեցին ոչ միայն Թիֆլիսում, ուր գործում էին հայ-մանկապարտէզների նախաձեռնողները, այլ նաև գաւառներում, ուր այս և այն տեղում նոյն անձնուիրութեամբ աշխատում էին նրանց պատրաստած դաստիարակչուհիները։

Այժմ հայ դպրոցների վերաբացման հետ միասին նոր գարգացում է սկսվում նաև հայ-մանկապարտէզների համար և Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի ստեղծագործութիւնը գալիս է նոր հիմք դնելու նրանց ապագայ հաստատուն շէնքի կառուցման։

—

Կան գրքեր, որոնց մասին քննադատական խօսք արտասանելիս, կը կամենայիր գրաւոր միայն նրանց արժանաւորութիւնները և իսպառ անտես առնել նկատված թերութիւնները։ Այդպիսի գրքերից է և Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի «Մանկական պարտէզը»։

Քննադատութիւնը նրա մասին մենք կը կամենայինք դարձնել գովեստների մի երկար շարան և չընդհատել այդ շարանը որ և է նկատողութեամբ, որ և է պակասութեան վրա մատնացոյց անելով—այնքան բուռն է մեր ցանկութիւնը, որ «Մանկական պարտէզը» արագութեամբ տարածվի ժողովրդի մէջ և արժանանայ նրա առանձին ուշադրութեան։

Եւ մենք չենք կասկածում, որ այդ այդպէս էլ կը լինի. հայ մայրերն և դաստիարակչուհիները հրճուանքով կընդունեն և կը կարդան «Մանկական պարտէզը». բայց և այնպէս մենք չենք կամենում թաղցնել ոչ հեղինակից և ոչ ընթերցող հասարակութիւնից մեր մի քանի նկատողութիւնները՝ յուսալով, որ քննադատի անկեղծ խօսքը միմիայն օգուտ կը բերի թէ մեզին և թէ մեր ասելիքին։

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի «Մանկական պարտէզը», ինչպէս գրքի երեսին ևս յիշված է, մի ձեռնարկ է մայրերի և դաստիարակչուհիների համար։ «Այս գրքում—ասում է հեղինակը իր առաջաբանի մէջ—ես բացատրում եմ այն բոլորը, ինչ որ մտնում է մանկական պարտէզի ծրագրի մէջ, այն է՝ թէ ինչ իրեր և ինչ ձեռնարկներ են պէտք. մի և նոյն ժամանակ ցոյց են տալիս նրանց ձեռք բերելու միջոցները կամ թէ ինչպէս պատրաստել անպէտն կերպով։ Ցոյց է տրված օրվայ պարապմունքների ամբողջ ընթացքը. բերված են խաղեր, երգեր, որոնք, եմ կարծիքով, ամենից շատ են համապատասխանում մանկական պարտէզի կոչման»։

Այս խօսքերը ճշտութեամբ չեն որոշում այն նպատակը, որ հեղինակը աչքի առաջ է ունեցել իր գիրքը կազմելիս։ Առաջաբանի այս հատուածը կարդալով՝ ընթերցողը կարող էր կարծել, որ հեղինակի նպատակն եղել է տալ հայ մայրերի և դաստիարակչուհիների ձեռքը լոկ մի զարձնական ձեռնարկ, որով նրանք կարողանային առաջնորդվել մանկական պարտէզի պարապմունքները զեկավարելիս. սակայն թերթելով գիրքը՝ մենք ուրախութեամբ տեսնում ենք, որ հեղինակի նպատակն աւելի լայն է։ Բացի գործնական ձեռնարկից նա տուել է նաև տեսական քիչ թէ շատ ընդարձակ բացատրութիւններ թէ ընդհանրապէս մանկական պարտէզի նշանակութեան և թէ նրա պարապմունքներից իւրաքանչիւրի մասին։ Անշուշտ այդպէս էլ պէտք է լինէր. ապրված էր հայ դպրոցների բաղդի հետ։ Ուր չը կար դպրոց՝ այնտեղ չէր կարող գոյութիւն պահպանել նաև մանկական պարտէզը—դպրոցի այս նախադուռը։ Բացի սրանից, չը գիտեմ ինչու, կովկասեան տեղական իշխանութիւնները մանկապարտէզներն ևս ենթարկելի էին համարում այն դրսեւնական օրէնքներին, որոնք հրատարակված էին հայ դպրոցների վերաբերմամբ։

Յիշում եմ ես այսպիսի փաստ. դպրոցների առաջին փակմանից յետոյ, 1885 թեականին, Ալեքսանդրոպօլի վարժուհիներից մէկը շարունակում էր պահել իր մանկական պարտէզը։ Ալեքսանդրոպօլի ոստիկանական վարչութիւնը, իմանալով վարժուհու «անմեղների յանցանքը»՝ ոչ միայն փակից մանկապարտէզը, այլ նաև ենթարկեց նրան դատի և միայն շնորհիւ տեղական հաշտարար դատաւորի բարեմտութեան՝ «յանցաւոր» վարժուհին ազատեցաւ պատասխանատուութիւնից...

Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում տիկին Ս. Բաբայեանի և օր. Գ. Յովհաննիսեանի փայփայած գաղափարներն և ցանած բարի սերմերը չէին կարող աջողութեամբ տարածվել ու զարգանալ. բայց և այնպէս նրանք չը մոռացվեցին. և չը մոռացվեցին ոչ միայն Թիֆլիսում, ուր գործում էին հայ-մանկապարտէզների նախաձեռնողները, այլ նաև գաւառներում, ուր այս և այն տեղում նոյն անձնուիրութեամբ աշխատում էին նրանց պատրաստած դաստիարակչուհիները։

Այժմ հայ դպրոցների վերաբացման հետ միասին նոր գարգացում է սկսվում նաև հայ-մանկապարտէզների համար և Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի ստեղծագործութիւնը գալիս է նոր հիմք դնելու նրանց ապագայ հաստատուն շէնքի կառուցման։

—

Կան գրքեր, որոնց մասին քննադատական խօսք արտասանելիս, կը կամենայիր գրաւոր միայն նրանց արժանաւորութիւնները և իսպառ անտես առնել նկատված թերութիւնները։ Այդպիսի գրքերից է և Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի «Մանկական պարտէզը»։

Քննադատութիւնը նրա մասին մենք կը կամենայինք դարձնել գովեստների մի երկար շարան և չընդհատել այդ շարանը որ և է նկատողութեամբ, որ և է պակասութեան վրա մատնացոյց անելով—այնքան բուռն է մեր ցանկութիւնը, որ «Մանկական պարտէզը» արագութեամբ տարածվի ժողովրդի մէջ և արժանանայ նրա առանձին ուշադրութեան։

Եւ մենք չենք կասկածում, որ այդ այդպէս էլ կը լինի. հայ մայրերն և դաստիարակչուհիները հրճուանքով կընդունեն և կը կարդան «Մանկական պարտէզը». բայց և այնպէս մենք չենք կամենում թաղցնել ոչ հեղինակից և ոչ ընթերցող հասարակութիւնից մեր մի քանի նկատողութիւնները՝ յուսալով, որ քննադատի անկեղծ խօսքը միմիայն օգուտ կը բերի թէ մեզին և թէ մեր ասելիքին։

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի «Մանկական պարտէզը», ինչպէս գրքի երեսին ևս յիշված է, մի ձեռնարկ է մայրերի և դաստիարակչուհիների համար։ «Այս գրքում—ասում է հեղինակը իր առաջաբանի մէջ—ես բացատրում եմ այն բոլորը, ինչ որ մտնում է մանկական պարտէզի ծրագ

և այն, սպանեցին երկու շուլավէրցիների։ Կոնջօրովին և Թէյմուրազովին ու յափշտակեցին մի հայուհի Միրզոյէվի կալուածքից։ Այդ բոլորին հասցրած վնասը 3 միլիոն ռուբ. աւելի է։ Թուրքերը, թիով 1600 հոգի զինված մարդկով, Սաղըզ բէգ Եղիպարօվի առաջնորդութեամբ, որոնց մէջ էր և ազնուականութեան պարագլուխ Հասան-բէգ Եղիպարովը, պաշարեցին մեր գիւղը, մեզ պատերազմ յայտարարելով և կամենալով ոչնչացնել մեր կայքը, որը պաշտօնապէս էլ հաստատված է, բայց դա չը յաջողվեց նրանց, որովհետև մեր ընտանիքները զէնքը ձեռք առած պատրաստվեցին նրանց դիմաւորելու, և նրանք մարդկային բազմաթիւ զոհեր տալու երկիւղից միայն թողին ու հեռացան։

Ահա այսպէս անյաջողութիւն կրելով, ապալտները մտածեցին մեզ վնասել կողմնակի ճանապարհով գաւառական հաստատութիւնները Եկատերինենֆելդ գաղութը տեղափոխելով։ Այդ տեղափոխութեան անհրաժեշտութեան մասին էլ նրանք, երևի համոզեցին խաղաղաբար յանձնաժողովի անդամներին, պատճառաբանելով մահմեդականների երկիւղը Շուլավէր յանձնելու համար։

Մենք, հայերս, պատրաստ ենք ինչ տեսակ երաշխաւորութիւններ էլ տալի լինի տալու, մեր գիւղը յանձնող խաղաղ թուրքերի ապահովութեան համար, որոնց միջոցին ժամանակ պատահում է և տեղական իշխանութիւնը, որ իր տրամադրութեան տակ բաւականաչափ ոյժ ունի դրա համար։ Եթէ 36,000 թուրքերը վախենում են յանձնել Շուլավէր գիւղը, որ չորս կողմից շրջապատված է միմիայն թուրք գիւղերով, որոնց միջով էլ նրանք պէտք է անցուցարձ ունենան, ճանապարհին առանց հանդիպելու ոչ հայերի և ոչ էլ հայ գիւղերի, —ա դա ուրեմն ինչ պէտք է լինի բազմաթիւ հայ գիւղերի՝ 46,000 հայ բնակիչների դրութիւնը, որոնք, շուլավէրցիների պէս շրջունակ գործ են ունենում կառավարական հաստատութիւնների հետ, եթէ որ վերջինները տեղափոխելու լինեն Եկատերինենֆելդը, որովհետև այդ գիւղը մտնելու համար, նրանք, հայերը, ճանապարհին պէտք է անցնեն շատ թուրք գիւղերի միջով։ Նախապէս կարելի է ասել, որ աչքի առաջ ունենալով մինչև այժմս էլ քանիցս կրկնվող մահմեդականների յարձակման դէպքերը ճանապարհին խաղաղ հայերի վրա, վերջինիներս հարկադրված կը լինեն խզել իրանց յարաբերութիւնները յիշեալ հաստատութիւններից։

Ի վերջոյ շուլավէրցիները գիտեմ են, իշխան Իլիա Ճամֆամաձէի նախագահութեամբ կազմված ազգանվանութեան խաղաղաբար յանձնաժողովին հետևեալ հարցերով՝

1) Հարցնում ենք այդ յանձնաժողովի անդամներին. ժողովուրդը լիազօրութիւն տուել էր այդ տեսակ մի միջնորդութիւն յարուցանելու և այդ միջոցը տեղական ամբողջ ազգանվանութեան համար շահաւէտ էր, արդեօք։ —Ա՛յ, նրանք լիազօրութիւն չունեն, և, ինչպէս յիշել ենք վերևում, այդպիսի մի առաջարկութիւն, իբրև միջոց, շահաւէտ չէ բոլորի համար, իսկ մեզ, հայ ազգանվանութեան համար միանգամայն կորստաբեր է։

2) Մի՞թէ Շուլավէր գիւղից հաստատութիւնները տեղափոխելով Եկատերինենֆելդ խաղաղութիւնը կը վերահաստատվի, ազգանվանութիւնը կը ազատվի յարձակումներից, կողոպտաններից ու ջարդերից։

3) Կարելի է, մի՞թէ, ներկայ դէպքում հաշտութեան մասին ճառել։ Հաշտութեան մասին կարելի է խօսել միայն այն ժամանակ, երբ երկու կողմերն էլ յարձակվում են միմեանց վրա, ուստի և համարձակվում ենք յայտնել, որ եթէ այդ յանձնաժողովի անդամները արդարև մտածում էին հաշտութեան մասին, ապա ուրեմն նրանք պարտաւոր էին յարուցանել մի հարց միայն, որպէս զի յառաջարութիւնը լուրջ միջոցներ թուրքերին հայերի հետ հաշտեցնելու համար, նրանց յարաբերութիւնների վերանորոգութեան և, որ ամենագլխաւորն է, թուրքերին զրգռող բէկերի ու ազալարների գործողութիւններին ու ագիտացիաներին վերջ տալու համար, միմիայն նրանց առաջարկած միջոցը մահմադական հեռացնում է այդ հարցից։

Վերջապէս, հարցնում ենք, ապա ինչ արեցին յանձնաժողովի անդամները։ Թալանված տերերում նրանք չեն եղել, հայերից ոչ ոքի, որ անագին վնասներ են կրել և այժմ տկլոր մնալ են փողոցներում, նրանք չը տեսան, նրանցից ոչ մէկը չը տուիլց թալանողներին վերադարձնել կողոպուտը։» «Нов. Обозр.»

*

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԽՕՍՔԸ*)

Ժամանակներիս քիչ ու շատ նման մի ժամանակ էլ այն էր։ Տառապանքի օրեր. դիմանալու և ապրելու հերոսական ջանք։

Պերզոյ, պարսից թագաւորը, յամառութեամբ հետևելով իր պապերի քաղաքականութեանը, կամենում էր կամ պարսկադեն, կրակապաշտ, դարձնել հայոց աշխարհը, կամ աւերել, եղծել։ Երկուից որն էլ պատահէր, նա հասած էր լինէր նպատակին. այն է՝ ապահովել իր թագաւորութիւնը հայերի ապստամբութիւնից և սրանց յոյներին ձեռնտու օգնական լինելուց։ Պարսիկների կարծիքով հայերի քրիստոնէութիւնը վերջիններս բարկամութիւնը քրիստոնէայ տերութեան կողմն էր հակեցնում։

Բայց խնդիրը այս էր, այն օրն էլ ինչպէս և այսօր. հայն, երբ նա օտարազգի իշխանութեան հպատակելու հարկի տակ էր ընկած, ընում էր այն կողմը, ուր ճանաչված էին արդարութիւնն ու իրաւունք, ուր չը կար հալածանք իր կրօնի դէմ, կամ իր ազգային ընդոր տեղականութիւնների դէմ։ Պարաքը կատարվում հաւատարիմ, գործելու և երախտաւոր լինելու բոլոր ասպարէզներում արիաբար և արդարաւոր, հայը պահանջում է երախտիքին արդար հատուցում. և երբ այդ չը կայ ու հակառակին է աւելի ճոխ հանդիսանում տերարտող իշխանութիւնը, այդ ցաւալի գործ, որ դուք բոլոր Արիներդ լսեցիք ու տեսաք. այն էլ շատ այրուձի չէր, այլ հարիւր մարդ կամ աւելի էլ քիչ, որոնցով հազար և երկու հազար մարդ փախցրինք։ Այս կուսումն էլ՝ մտքովդ չանցնիս պարծենալով, իբր թէ աւելի քաջութեամբ յաղթեցիք դուք մեզ. այլ նենգութիւնից և մեր երկպառակութիւնից եղաւ ինչը։ Չի եթէ այս հայ գնդի վրա լինէր անն ու երկիւղը, ինչպէս Արեաց տիրոջը իր ծառայի վրա, և իմ ձեռքումս այնպէս լինէին նրանք, ինչպէս էին նրանք իմ նախնիների ձեռքի տակ, և ես իշխանութիւն ունենայի վատաացածներին անով ու վեանքով հարց ու փորձել և գլխապարտ անել, ու կարենայի քաջացածներին բարի անել ու պատիւ տալ, ցոյց կը տայի Արեաց տիրոջը և ձեր ամենքին՝ թէ Արիների մէջ որ գունդն աւելի անուանի էր ու լաւ. իսկ եթէ աւելի էլ լաւ ու քաջ չերևին, բայց աւելի ցած և ոչ իսկ մի փոքր չէին թոյլ տալ որ երևին։ Սակայն այժմ որ դուք վատ տոհմից ու անպիտան մարդկանցից իշխաններ էք կարգել հայոց աշխարհի վրա, զրանք իրանց յետնութեամբը կորցրին հայոց աշխարհից քաջութիւնը, բարի անունը և լաւութիւնը։ Չի հընդար չէ լաւ լինել գնդին, որի զօրագլուխը վատ է. որպէս և անհնար է մի աշխարհի յառաջադէմ և անուանի լինել, եթէ այդ աշխարհի իշխանները իրանք յետնեալ մարդիկ են։

Բայց եթէ դու արդարև կարողանա անել ինչ որ խօսում ես, և թագաւորն հաւան լինի մեզ նուաճելու, ամենից առաջ նա թող քրիստոնէութիւնը ջնորհէ հայոց աշխարհին և մեր աշխարհից վերացնէ այն ազտերի վանճաքը, որ անպիտան ու վատ մարդիկը խաբեութեամբ գնում են ձեզանից, և առնելուց յետ ծաղրում են ձեզ էլ, մոխրին էլ։ և թէ ճանաչէք մարդու լաւն ու անպիտանը և ամէն մէկից գործ պահանջէք և ոչ թէ կատակարանութիւն. գործին նայելով՝ արդիւնքի համեմատաք հատուցումը. և եթէ կարենաք գրել և կնքով հաստատել թէ—մեր բռնութիւնից եղաւ ձեր այդ յանցումը և ոչ թէ ձեր ստահակութիւնից,—և ներէք. յետոյ՝ եթէ տոհմիկը ընդունէք իբրև տոհմիկ և վատատոհմանն էլ անտոհմակ. եթէ այդպէս մեզ նուաճէք՝ դուք մեր ընկի տերերն էք և մեր հայրերի ու մեր նախնիների, մենք էլ ձեզ ծառայութիւն կանենք ու հպատակ կը լինենք։ Ապա թէ կը շարունակէք յետնեալին լաւերի տեղ դնել ու լաւերին յետ տանել և մեր աշխարհի իշխանութիւնը կը վանաէք պղտեղի մեղքի փոխարէն, և ոչ թէ իրաւունքին նայելով կը տաք արժանաւորներին ու պիտանիներին, մենք, որ ապատամբեցինք, ոչ առանց գիտնալու թէ Արիների դէմը կանգնել կարող չենք. գիտնալով հանդերձ մեր տառապալից ոյժը և Արիների այնպիսի մեծ և անհամար զնդի ոյժի սատկութիւնը, մենք մանը մեր աչքի առաջ գրենք ու պատրաստ ենք մեռնելու անուանի և լաւ մահով, քան թէ ուրացութեամբ վատաբար ապրելու և յաւիտենական կրօտին մատնուելու։—

Այդպէս խօսեց Մամիկոնեան Վահանը հինգերորդ դարում և նրա վեհ հոգին նուաճեց գոռող պարսիկին իր օրհնաւոր կամքի տակ։ Վահան վերադարձաւ հայոց աշխարհում հայկական մարզպանութիւնը և ապա քրիստոնէութիւնը։

Ա. Մ. Եղիկեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿՐՈՒՄ*)

12) Գաւառական հոգատէրերի ընտրողական ժողովներում անմիջական կերպով մասնակցում են. 1) Անդրկովկասի նահանգներում և շրջաններում՝ այն անձինք, որոնք վճարում են իրանց պատկանող հողային կամ ուրիշ կայքի համար, (որոնք չեն մտնում 16 յօդ. 1 կետում յիշված առեւտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնների շարքը) գեմստվոյական հարկ, տարեկան ոչ պակաս 15 բուբլուց։ 2)

*) Տես № 9.

գործ, որ դուք բոլոր Արիներդ լսեցիք ու տեսաք. այն էլ շատ այրուձի չէր, այլ հարիւր մարդ կամ աւելի էլ քիչ, որոնցով հազար և երկու հազար մարդ փախցրինք։ Այս կուսումն էլ՝ մտքովդ չանցնիս պարծենալով, իբր թէ աւելի քաջութեամբ յաղթեցիք դուք մեզ. այլ նենգութիւնից և մեր երկպառակութիւնից եղաւ ինչը։ Չի եթէ այս հայ գնդի վրա լինէր անն ու երկիւղը, ինչպէս Արեաց տիրոջը իր ծառայի վրա, և իմ ձեռքումս այնպէս լինէին նրանք, ինչպէս էին նրանք իմ նախնիների ձեռքի տակ, և ես իշխանութիւն ունենայի վատաացածներին անով ու վեանքով հարց ու փորձել և գլխապարտ անել, ու կարենայի քաջացածներին բարի անել ու պատիւ տալ, ցոյց կը տայի Արեաց տիրոջը և ձեր ամենքին՝ թէ Արիների մէջ որ գունդն աւելի անուանի էր ու լաւ. իսկ եթէ աւելի էլ լաւ ու քաջ չերևին, բայց աւելի ցած և ոչ իսկ մի փոքր չէին թոյլ տալ որ երևին։ Սակայն այժմ որ դուք վատ տոհմից ու անպիտան մարդկանցից իշխաններ էք կարգել հայոց աշխարհի վրա, զրանք իրանց յետնութեամբը կորցրին հայոց աշխարհից քաջութիւնը, բարի անունը և լաւութիւնը։ Չի հընդար չէ լաւ լինել գնդին, որի զօրագլուխը վատ է. որպէս և անհնար է մի աշխարհի յառաջադէմ և անուանի լինել, եթէ այդ աշխարհի իշխանները իրանք յետնեալ մարդիկ են։

Բայց եթէ դու արդարև կարողանա անել ինչ որ խօսում ես, և թագաւորն հաւան լինի մեզ նուաճելու, ամենից առաջ նա թող քրիստոնէութիւնը ջնորհէ հայոց աշխարհին և մեր աշխարհից վերացնէ այն ազտերի վանճաքը, որ անպիտան ու վատ մարդիկը խաբեութեամբ գնում են ձեզանից, և առնելուց յետ ծաղրում են ձեզ էլ, մոխրին էլ։ և թէ ճանաչէք մարդու լաւն ու անպիտանը և ամէն մէկից գործ պահանջէք և ոչ թէ կատակարանութիւն. գործին նայելով՝ արդիւնքի համեմատաք հատուցումը. և եթէ կարենաք գրել և կնքով հաստատել թէ—մեր բռնութիւնից եղաւ ձեր այդ յանցումը և ոչ թէ ձեր ստահակութիւնից,—և ներէք. յետոյ՝ եթէ տոհմիկը ընդունէք իբրև տոհմիկ և վատատոհմանն էլ անտոհմակ. եթէ այդպէս մեզ նուաճէք՝ դուք մեր ընկի տերերն էք և մեր հայրերի ու մեր նախնիների, մենք էլ ձեզ ծառայութիւն կանենք ու հպատակ կը լինենք։ Ապա թէ կը շարունակէք յետնեալին լաւերի տեղ դնել ու լաւերին յետ տանել և մեր աշխարհի իշխանութիւնը կը վանաէք պղտեղի մեղքի փոխարէն, և ոչ թէ իրաւունքին նայելով կը տաք արժանաւորներին ու պիտանիներին, մենք, որ ապատամբեցինք, ոչ առանց գիտնալու թէ Արիների դէմը կանգնել կարող չենք. գիտնալով հանդերձ մեր տառապալից ոյժը և Արիների այնպիսի մեծ և անհամար զնդի ոյժի սատկութիւնը, մենք մանը մեր աչքի առաջ գրենք ու պատրաստ ենք մեռնելու անուանի և լաւ մահով, քան թէ ուրացութեամբ վատաբար ապրելու և յաւիտենական կրօտին մատնուելու։—

Այդպէս խօսեց Մամիկոնեան Վահանը հինգերորդ դարում և նրա վեհ հոգին նուաճեց գոռող պարսիկին իր օրհնաւոր կամքի տակ։ Վահան վերադարձաւոց հայոց աշխարհում հայկական մարզպանութիւնը և ապա քրիստոնէութիւնը։

Ա. Մ. Եղիկեան

*) Ղազար Փարպեցու պատմութիւնից։

ռանց տեսական բացատրութիւնների գէրքը կը կորցնէր իր նշանակութեան կարևորագոյն մասը և թերևս անհասկանալի կը մնար մեզանում շատ-շատերի համար։ Իւրաքանչիւր գործնական պարապմունքի տեսական մասը—առանձնապէս մանուկների զատարակութեան հարցում—այն ոգին է, որ շունչ և կենդանութիւն է տալիս պարապմունքին։ Մի մայր կամ դաստիարակչուհին, որ չը գիտէ, թէ ինչու կամ ինչ նպատակով երեխային պէտք է զրաղցնել մանկական պարտէզում ապա և ոչ ուրիշ խաղով, երգով կամ պարապմունքով—նա չէ կարող ծառայել իր կոչմանը և օգտակար լինելու տեղ՝ շատ անգամ վնասարար կը լինի երեխայի համար։ Այս տեսակէտից պէտք է շնորհաւոր լինել հեղինակին, որ նա չէ մոռացել ուշադրութիւն դարձնել նաև մանկական պարտէզի և մանուկների նախադպրոցական շրջանի կրթութեան թէօրէական մասի վրա։

Սակայն մենք ստիպված ենք խոստովանել, որ, մեր կարծիքով, գրքի այս մասը այնպիսի ազդողութեամբ չէ կազմված, որով կազմված է գործնական բաժինը։

Մեծածաւալ գրքի մէջ մանկական պարտէզին և դրա հետ միասին մանուկների նախադպրոցական կրթութեան տեսական մասին, որ պէտք է հիմք ծառայէր գրքի ամբողջութեան համար, նուիրված են ընդամենը 39 երես։ Ահա այսչափ սուղ երեսներում հեղինակը զեսեղել է և Ֆ. Ֆրէօբելի, մանկական պարտէզների և մանուկների նախադպրոցական կրթութեան հիմնադրի, համառօտ կենսագրութիւնը, և «Ֆրէօբելի սիստեմի քննական գնահատութիւնը», և «Ի՞նչ է մանկական պարտէզը», և «Մօր կամ պատրիպանուհուդերը մանկական պարտէզում», և «Ինչպէս են մանուկները անցկացնում ժամանակը մանկական պարտէզում յօդուածները։»

Ուղիղ է, յետոյ այս և այն յօդուածում, զուտ գործնական ցուցումների մէջ, մէկ-մէկ պատահում են և տեսական նկատողութիւններ, ինչպէս օրինակ «Խաղ» վերնագրութիւնը կրող յօդուածում, բայց այդ հանգամանքը չէ կարող փոխել մեր կարծիքը այն մասին, որ գրքի տեսական բաժինը բաւականաչափ պակասաւոր է և նրա երկրորդ հրատարակութեան ժամանակ պէտք է ենթարկվի հիմնական փոփոխութեան և մշակման։ Եւ անուշադիր մի՞այն տեսական մասի համառօտութիւնը չէ, որ մենք համարում ենք նրան անբաւարար, այլ նաև այն, որ զրքի այդ բաժինը կազմված է ոչ ցանկալի հմտութեամբ։

Ահա, օրինակ, մի նմուշ հեղինակի տեսական բացատրութիւններից. «Ֆրէօբելի փիլիսոփայական գաղափարները ինքնուրոյն չեն։ Նրա կարծիքով, համաշխարհային կեանքը հետևում է մի օրէնքի—հակադրութիւնների օրէնքին։ Ընդհանուր աշխարհային մի օրէնքը, ըստ Ֆրէօբելի, կայանում է նրա մէջ, որ միակը Աստուածն է, նրանով ամէն բան շարժվում է և ունի զոյութիւն, ամէն բան նրանով է պայմանաւորված։ Բայց աշխարհում կայ կանանց և զարգացում, ուրեմն կեանք և զարգացում կայ նաև Աստուծոյ մէջ, որ աշխարհի հետ կազմում է մէկ միութիւն և այդ զարգացումը կատարվում է հակադրութիւնների օրէնքով»։ Այս հատուածը, որ մենք առալ ենք բերում «Ֆրէօբելի սիստեմի քննական գնահատութիւնը» յօդուածից, իսկապէս ոչինչ չէ բացատրում. նա նոյն իսկ մօտաւորապէս զաղափար չէ տալիս ընթերցողին այն մասին, թէ ինչն էր կազմում Ֆրէօբելի փիլիսոփայական—մանկավարժական դաւանանքի հիմքը, որի վրա կառուցված է նրա ամբողջ սիստեմի շէնքը։ Այն ինչ այս հատուածը միայն է, որի մէջ հեղինակը շօշափում է Ֆրէօբելի մանկավարժական-փիլիսոփայական աշխարհայեացքի հիմունքը։ Ի նկատի ունենալով նախ՝ այս հարցի մեծագոյն կարևորութիւնը մի այնպիսի գրքի համար, ինչպիսին է «Մանկական պարտէզը» և ապա այն հանգամանքը, որ մեր հասարակութիւնը, մեր մայրերն և դաստիարակչուհիները, իսպառ անծանօթ լինելով Ֆրէօբելի գաղափարներին, հնարաւորութիւն չունեն մի այլ աղբիւրից քաղելու կարևոր տեղեկութիւնները նրանց մասին, հեղինակը վերոյշեալ ընդհանուր, մութ, և «տրածական» բառերով չը պիտի լրացրած համարէր իր խօսքը մի սիստեմի հիմնական էջի մասին, որից բղխում է նրա ամբողջ «Մանկական պարտէզը»։

Առհասարակ մենք պէտք է ասենք—և թող մեզ ներէ յարգելի հեղինակը,—որ նրա «Ֆրէօբելի սիստեմի քննական գնահատութիւն» յօդուածը պարունակում է իր մէջ շատ... մթութիւններ և նոյն իսկ հակասութիւններ։ Մեզ թւում է, որ շատ աւելի լաւ վարված կը լիներ հեղինակը, եթէ առանց «քննական գնահատութեան»՝ պարզ և գիւրամատչելի կերպով դնէր իր գրքի մէջ Ֆրէօբելի հիմնական դաւանանքի նկարագիրը, թէկուզ հէնց... Բրօկհաուզի «Էնցիկլոպէդիական» բառարանից, եթէ անհնար էր «մանկ բուն զգրէւրից»։—Ֆրէօբելի գաղափարների և նրա դաստիարակչական սիստեմի «քննական գնահատութիւնը» կարօտ է ժամանակի և նրա մասին դեռ հեղինակաւոր խօսք չէ ասված ոչ միայն Գերմանիայում, մանկավարժութեան կասիքական հայրենիքում, այլ և այն երկրներում, ինչպէս օրինակ Ամերիկայի Միացեալ նահանգներում, որ Ֆրէօբելի գաղափարները մանուկների նախադպրոցական դաստիարակութեան և մանկական պարտէզի մասին տարածվում են նոյնութեամբ, առանց «քննական գնահատութեան»։ Այն ինչ ամենքին լաւ յայտնի է, որ «դրական» եանկիները առանց գնահատութեան ոչինչ փոխ չեն առնում և մացնում իրանց կեանքի մէջ։ Լաւ ըմբռնել Ֆրէօբելի գաղափարները—դա արդէն ինքն ըստ ինքեան նշանակում է գնահատել նրանց... Ես դէմ չեմ քննութեան, բայց դա...կարօտ հմտա գրչի։ Հարկաւ, ես խօսում եմ այդ անգուգական մանկավարժի հիմնական փիլիսոփայական—դաստիարակչականկրօնքների և ոչ այդ սկզբունքները կեանքի կամ մանկական պարտէզի մէջ իրականացնելու ձևերի մասին, որոնք կարող են լինել բազմաձև և նայած երկրին, ազգին ու լեզուին՝ ենթակայ են անվերջ փոփոխութիւնների ու զարգացման։

Այսուամենայնիւ պէտք է ասեմ, որ գրքի տեսական մասի հնգագ յօդուածներից վերջին երեքը—«Ինչ է մանկական պարտէզը», «Մօր կամ պարտիզպանուհու դերը մանկական պարտէզում» և «Ինչպէս են մանուկներն անցկացնում ժամանակը մանկական պարտէզում»—համեմատաբար աւելի աջողված են։ Հեղինակը նրանց մէջ տալիս է խելացի բացատրութիւններ և մանկավարժական ճիշտ ու նպատակայարմար հրահանգներ, որոնք չափազանց օգտակար կարող են լինել ամէն մի մօր և դաստիարակչուհու համար, որ յանձն կառնի զբաղեցնել երեխաներին մանկական պարտէզի պարապմունքներով։

—

Ս. Վ. Արղութեան-Երիցյանաքաղաքի «Մանկական պարտէզի» գլխաւոր արժանաւորութիւնը նրա երկրորդ, գործնական մասի մէջ է։ Դա է զրքի զարդը. այդ մասն է, որ գրաւում և տեղ-տեղ հիացնում է ընթերցողին ու դարձնում գիրքը մի անհրաժեշտ և փերին ասեմ՝ ճանի օգտակար ձեռնարկ ամէն մի ընտանիքի համար, որ կան երեխաներ։ Այստեղ ամէն մի խօսքից երևում է, որ հեղինակը հիմնովին ուսումնասիրել է իր գործը, սիրում է նրան և խօսում, զառում ու հրահանգում է իրրև հմուտ մանկավարժ։

Գրքի այս երկրորդ, գործնական մասը,—մասերի բաժանում ենք մենք, հեղինակը չունի այդպիսի բաժանվածքներ,—բաղկացած է հետևեալ գլուխներից. 1) կաւից կազատաքեր. 2) հիպոտներ դասաւորելը. 3) շինութիւն. 4) նկարչութիւն. 5) տրաֆօրատ և պատանկարչութիւն. 6) հիւսելը. 7) թուղթ կտրատելը և կտրելը. 8) յաւելուն շարելը. 9) գործելը և ծակծկելը. 10) աշխատանքներ սիսեսից, խցանից և տաշիղներից. 11) զուտաւոր քառան իւղներ և եռանկիւններ դասաւորելը—մոզայիկ. 12) աշխատանքներ սերմերից. 13) թուղթ ծալելը. 14) աշխատանքներ ծակոտի գոյնզոյն թղթից. 15) լօտօ. 16) պատմութիւններ. 17) հայրենագիտութիւն. 18) մանկական պարտէզի պարապմունքների ցուցակը. 19) խաղ. 20) մարշ և երգեր. 21) երգեր շարժական խաղերով. 22) պարերգեր. 23) խաղ առանց երգի։

Ահա ինչպիսի հարուստ նիւթ է պարունակում իր մէջ այս բոլանդակալից գիրքը։ Ակնյայտնի հմտութեամբ և խնամքով կազմված են մանաւանդ «Պատմութիւններ», «Մարշ և երգեր», «Երգեր շարժական խաղերով», «Պարերգեր» և «Խաղ առանց երգի» բաժինները, որոնք առանձին-առանձին վերցված՝ կարող էին մէկ-մէկ դասագրքեր կազմել մանուկների նախադպրոցական կրթութեամբ զբաղող մայրերի և դաստիարակչուհիների համար։ Այս բաժինների մէջ հեղինակը զեսեղել է այն ամէն պիտանի նիւթերը, որ հնար է եղել գտնել հայ և օտար գրականութեան մէջ։ Մորուղդ կը տայինք ապէսյ յարգելի հեղինակին, որ գրքի երկրորդ հրատարակութեան ժամանակ «Պատմութիւնների» բաժնում խուսափէր այնպիսի բանաստեղծութիւններից, ինչպիսին է, օրինակ, «Թաղումը» (երես 107)։ Ամեն մի պատանեկութիւն, որ անվում է փոքրահասակ մանուկներին, պէտք է լինի փոքր ի շատէ գեղարուեստական—հասակի զէպքում նրա մէջ հաղորդված ընդհատմանի կամ այլ տեղեկութիւնները, որքան էլ նրանք բան ինքեան ցանկալի լինէին, ոչ միայն հեռաքրքրութիւն չեն շարժի, այլ նոյն իսկ ձանձրալի կը լինեն երեխաների համար։ Ապա մենք անհրաժեշտ ենք համարում, որ հեղինակը նոյն այդ բաժնում օգտվէր նաև մեր ժողովրդական հեքիաթներից և զրոյցներից, որոնց անսպառ աղբիւրի մէջ նա կը գտնի շատ անգամ բանաստեղծական թանգագին գոհար—պատմութիւններ 5—8 տարեկան երեխաների համար։ Հեքիաթը կամ ժողովրդական զրոյցը կրթական այն հրաշալի նիւթն է, որ ամենից աւելի օտիկ և սիրելի է մանկական հոգուն և, ի հարկէ, հեքիաթներ ասելու կամ սովորելու հանդէպ չը պէտք է զրկել երեխային։ Հմուտ դաստիարակչուհին հեքիաթների մէջ կարող է գտնել այնպիսի բարոյականի կրթական նիւթ, որպիսին չի տայ նրան ոչ մի արուեստական «պատմութիւն»։ Եւ եթէ հեքիաթները համարվում են ասուցման անհրաժեշտ նիւթ տարրական դպրոցի առաջին դասարանի աշակերտուհիների համար, որքան աւելի անհրաժեշտ են նրանք մանկական պարտէզում, ուր 5—8 տարեկան փոքրիկ մանուկների կեանքն իսկ ամբողջովին հեքիաթ ու բանաստեղծութիւն է։

Առհասարակ մենք կը ցանկայինք, որ թէ «Պատմութիւններ», թէ «Խաղեր» և թէ «Երգեր» բաժիններում հեղինակն առանձին ուշադրութիւն դարձնէր այն ամենի վրա, որ կազմում է հայ-ժողովրդական կեանքի գեղեցկութիւնն և հարստութիւնը ու նրանցով փոխարինէր արուեստականն ու բանաստեղծականը։ Մենք ամենքին դէմ չենք, որ յիշված բաժինների համար կարևոր նիւթեր երևնեան փոխ առնվեն նաև օտար ազգերի կեանքից ու զրականութիւնից, բայց և այնպէս հայ մանուկներին կրթութեան գործում ամենից աւելի դերադաս պէտք է համարել այն, ինչ տալիս է ինքը հայ ժողովուրդը։ Չէ որ մանկավարժութեան հիմնական կանոններից մէկն էլ այն է, որ ուսուցումը ծանօթ նիւթից պէտք է քաղել իր սկզբնական պաշարը և ապա նրա միջոցով անցնել դէպի անծանօթը։ Եւ չէ՞ որ մանկական պարտէզը ի նկատի ունի ոչ միայն թիֆլիսի երեխաներին, ուր հայ ժողովրդական կեանքի առանձնայատկութիւնների արտայայտութիւնը չափազանց թոյլ է, այլ նաև, ու գլխաւորապէս, գաւառների հայ մանուկներին, որոնց համար ուսուցման նախադուռն կարող են լինել միմիայն ժողովրդական զրոյցները, խաղերը, երգերն և պարերը։

Անշուշտ մեր այս մասնաւոր նկատողութիւնները «Մանկական պարտէզ» զրքի մասին ամենափոքր չափով անգամ չեն նսեմացնում այն բարձրագոյն արժանաւորութիւնները, որ ունի նա և որոնք կայանում են նրա առատ և բազմազանի բովանդակութեան, նիւթի՝ յարմարաւոր դասաւորման, հմտալից ցուցումների և հրահանգների, ինչպէս նաև գեղեցիկ պատկերների և հրաշալի յաւելվածի մէջ։ Նոյն իսկ զրքի տպագրութիւնը աչքդ է և մաքուր—մի հանգամանք, որ այնքան հաղագիտ է մեզանում և որ պատիւ է բերում «Հերմէս» տպարանին։

Մի վերջին խօսք հայ-մայրերին և դաստիարակչուհիներին.—գնեցէք «Մանկական պարտէզ»։ գնեցէք, ոչ իբրև սեղանի կամ զարդարի զարդ, այլ իբրև մի ամենակարևոր անհրաժեշտութիւն ձեր մանուկների դաստիարակութեան համար. գնեցէք առանձնապէս դուք, օտարասօս մայրեր, որոնց ընտանիքներում, իբրև զոլորնի սպրդած աւազակ, բուն է դրել օտար լեզուն և բռնի դուրս մղել մայրենին ու հարազատը. գնեցէք և պարապեցէք այս գրքով ձեր փոքրիկների հետ և դուք կը տեսնէք, որ ոչ մի լեզու աշխարհիս վրա այնքան քաղցր, այնքան անոյշ, այնքան հաճելի չի թւայ ձեր երեխաներին, որքան մայրենի անմսմս լեզուն. դուք կը տեսնէք, որ ձեր անոյշ, մեռելածին ընտանիքների մէջ մայրենի քաղցր լեզուի հետ միասին կը ստեղծվի նոր կեանք, նոր երջանկութիւն... Դուք կը հասկանաք, որ մայրենի անվին մարգարիտը փոխել էք անպիտան յուլունքների հետ և կամովին զրկել էք ձեզ և ձեր երեխաներին մայրենի լեզուով խօսելու գերագոյն վայելքից...

Գնեցէք և սովորցրէք նրանց հայ լեզուն. այդ լեզուն է ձեր որդոց զանձը, հարստութիւնը, յոյսը, ապագան... Մի՞ զրկեք նրանից ձեր երեխաներին, եթէ մայրական սիրոյ գէթ մի նշոյլ, գէթ մի փոքրիկ կայծ կայ ձեր սրտում դէպի ձեր մանուկները...

Ա. Մխիթարեան

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐ

—

ՇՈՒՇԻ, 27 յունվ. 3 ժամ 10 րոպէ։

Զօրք ուղարկվեց Զանգեզուրի գաւառը։ Շուշուց այսօր ճանապարհվեց հաշտարար յանձնաժողովը։ Գեներալ Գոլոշչապովը նոյնպէս մտադիր է ուղևորվել այնտեղ։ Քաղաքում և գաւառում առ այժմ հանդարտ է։ Հայերի համար դեռ չեն ստացված ապրուստի մթերքներ։ Հաշտարար յանձնաժողովները գնացին նաև Շուշու և Ջիբրայելի գաւառները։

Աշոտ եպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկվայ մեր համարում մենք հաղորդել էինք մի օհլօղօչների սպանութեան և դրա հետ միաժամանակ Լեվանի՝ հիւրանոցի շինութեան այրվելու մասին։ Այժմ կարող ենք լրացնել մեր հաղորդագրութիւնը։ Սպանութիւնը կատարվել է հիւրանոցի մէջ։ Սպանվողը լեհ է ազգով և նրա անունն է Կրժեվեց։ Պատճառը անյայտ է։ Հրդէհը հանգցրվեց հրդեհաշէջների միջոցով։

—

Երէկ, Թիֆլիսի զինուորական տեղամասում ժողովրդի բազմութեան, մասնաւորի և արտաքսական աշխարհի ներկայացուցիչների և ուրիշ յարգոյների ներկայութեամբ կատարվեց հանդուցեալ երգչուհի օրիորդ Պապայեանի հոգեհանդիսաւորը։ Երգում էր օպերային խումբը։

—

Կոմս Վիտտէի նախագահութեամբ խորհրդակցութեան մէջ քննվում և նորերս Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի կարծիքն իմանալու համար ուղարկված նախագծի համաձայն, կովկասում 350 հազար ազգաբնակութիւնը ընարում է մէկ պատգամաւոր։ Այդպիսի պայմաններում կովկասեան մահմեդականները կունենան Դումայում 11 պատգամաւոր, վրացիք 7 և հայերը 5 պատգամաւոր։ Բաքու քաղաքը ուղարկում է 2 պատգամաւոր, մէկը թուրք և մէկը հայ։ Բաքուի նահանգը նոյնպէս երկու պատգամաւոր է ուղարկում, բայց երկուսն էլ մահմեդական։ (Բ. Բ)

—

Պետերբուրգում, յունվարի 15-ին կայանալիք մահմեդական համաժողովի արգելման առիթով պ. Աղայեվի «Իրշադ» լրագրին ասում է. «Այդպէս. մինիստրը բայարձակապէս չը թոյլատրեց համաժողովը։ Վա՛յ, վա՛յ մեզ։ Մութ անձնաւորութիւնների կողմից ուղարկված մատնութիւնները համոզեցին կառավարութեանը, որ մահմեդականների համաժողովը պէտք է քննվ, Աստուած գիտէ, ինչ տեսակ դաւադրական հարցեր։ Մեզ արգելեցին ասել այն՝ ինչ դարերով չենք ասել։ Մեծ Ալլահ, ազատիր մեզ չէյթաններից»,

—

Պետերբուրգի քաղաքապետը հեռախօսով յայտնել է մայրաքաղաքի բոլոր ոստիկանութիւններին, որպէս զի հետևեն մահմեդական համաժողովի ներկայացուցիչներին և միջոցներ ձեռք առնեն արգելելու համար համաժողովը։

—

Յունվարի 20-ին, մահմեդականների առաջին համաառուսական համաժողովի կողմից մի պատգամաւորութիւն, որ բաղկացած էր չորս ընարեալ անդամներից, Կրիմի մուֆտի կարասովի առաջնորդութեամբ, ներքին գործերի մինիստրի հրաւէրով ներկայացաւ վերջինիս անձամբ բանակցելու համաժողովը բանալու մասին։ Մինիստրը, համաժողովի պատուիրակների հետ խօսակցելուց յետոյ յայտնեց, որ ներկայումս համաժողով բանալ ինքը թոյլատալ չէ կարող, որովհետև այդ նոյն բանը կը ցանկանան և ուրիշ այլադաւաններ, և դիսատորական հրէաները և լեհերը։ (Բ. Բ.)

—

Զէնք ունենալու և կրելու վկայական ստանալու համար տրված խնդիրը, այդ տեսակ նոր վկայականներ տալը և հների վրա կնիք դնելը, Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ նահանգապետի դիւանատունը, այլ ևս չէ ընդունում, ուստի բոլոր զէնք ունեցողները հրաւիրվում են անմիջապէս յանձնել այդպիսիները զօրամասերին կամ կոմենդանտի վարչութեանը։

—

Թիֆլիսի նահանգապետի դիւանի կառավարչի օգնական պ. Մաշավարեանին նշանակվում է Ախալցխայի գաւառապետի օգնական։

—

Հայկական Բարեգործական ընկերութիւնը վերադարձրեց քաղաքային վարչութեանը 209 խն լիրներ, որ ստացել է Թիֆլիսի հայ-թուրքական ընդհարումների ժամանակ վնասված զանազան հայերից, որոնք նպատակ են խնդրում, և ուղարկած գրութեան մէջ յայտնում է, որ նա հրաժարվում է խնդրուածների մասին ժողովել անհրաժեշտ տեղեկութիւններ վարչութեան համար։ Վարչութիւնը մտադիր էր վնասվածներին նպաստներ տալ նրանց մասին Բարեգործական ընկերութեան միջոցով տեղեկութիւններ հաւաքելուց յետոյ։

—

Թիֆլիսի նահանգապետին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Դուշէթ գաւառի բնակիչների կողմից գաւառական ապնուականութեան պարգևելու իշխան Կարբելի առաջնորդութեամբ միջնորդելու, որպէս զի Դուշէթի գաւառապետ գնդապետ Ֆօն-Բաումգարտէնին պահեն իր պաշտօնի մէջ։ «Կաւ.»

—

Թաւրիզից, պ. Երուանդ Քէօսէեանը մեզ խնդրում է տալ հետևեալը. «Կարդալով ձեր Թերթի յայտարարութիւնը Քէօսէեան Երուանդի մասին, յայտնում եմ, որ ես այժմ Թաւրիզում եմ և ուսուցիչ Արմենան զպրոցում։

Ստացանք Մ. Զմշկեանի պատի-ծիծաղ «բրոշյուրը» 1906 տարվայ համար։ Գինն է 40 կ.։

—

Ասխարադից, պ. Մովսէս Մովսէսեանից, ստացանք 554 բուբլի, որ հաւաքվել է Ասխարադից հայ գաղութի մէջ, Մենդելեան տուներին, ի նպաստ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ վնասված շուշեցիների։ Նուիրատուների ցանկութեան համաձայն այդ գումարը պէտք է ուղարկենք Շուշի, գործադրելու որոշված նպատակին։

—

Զինուորական մինիստրը այն միտքը յայտնեց, որ իր կարծիքով «Военный Голосъ» լրագրի ուղղութիւնը անհանդուրժելի է, հետևաբար նոյն լրագրի հրատարակութիւնը դադարում է։

—

Մեզ հաղորդում են, որ մօտերս Կազանլինսկում, Սէր-Դարիայի շրջան, նահանգական դատարանը պիտի քննէ երկու ռուս զինուորների և հայերի գործը, որոնք մեղադրվում են տեղական աղբունի պահեստից հրացաններ գողանալու մէջ։

—

Պ. Վ. Սահակեան խնդրում է մեզ տալ հետևեալը. «Գողանալի արժանի է այն երես փոխանը, որը ամեն չնչ գործ դնելով հետևում է եկեղեցու բարեզարդութեանը. այդպիսի արժանաւորներից մէնն է քաղաքիս նոր-նշանչեն ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխան պ. Մանուկ Մնացականեանը՝ որի շնորհիւ ամենայն կիւրակի լսում ենք քառաձայն քաղցր երգեցողութիւն։ Թումբը բաղկացած է երկսեռից և կառաւարում է հանգուցեալ Մակար Եկմալեանի աշակերտ պ. Ազատ Մանուկեանը, որը իր արհեստը կատարելագործելուց յանձն է առել այդպիսի մի պատասխանատու գործ. նա միևնոյն ժամանակ ուսուցիչ է նոյն եկեղեցու զպրոցում։ Ցանկալի է, որ քաղաքիս միւս եկեղեցիների երեսփոխաններն ևս հետևեն պ. Մնացականեանի բարի օրինակին։

—

Յունվարի 27-ին, առաւօտեան 9½ ժամին Օլգինսկի փողոցի վրա, Նալբանդեանցի փայտի պահեստի մօտ, մի թուրք դաշոյնը ձեռքին յարձակվեց Բօղարեանցի դրօգպանի վրա, որը նոյն բոպէին դրօգը բարձած պարանը էր բերում դէպի քաղաք։ Դրօգպանը նոյն բոպէին վազեց ոստիկանի մօտ, բռնել տուեց թուրքին, որին դաշոյնը ձեռքից խլելով՝ տարան ոստիկանատուն։

—

Վերջին ադէտից վնասվածների օգտին ստացանք 1) Մէրզոյից Յովհ. Իսկանդարեանից 25 ր., 2) Ղզլ-Արվադից Ֆ. Բաղդասարեանից 25 ր., 3) Բաքուից Պօղոս Չիլինգարեանի հարանէքի, հանդէսին հաւաքած 30 ր., 4) Կերկից ժամարեանի և Բարախանեանի միջոցով հաւաքած (աւետիսից) 20 ր. 5) տիկ. Զարուհի Գասպարեանից 5 ր., 6) Բաքուից Բագրատ Սողոմոնեանից 2 բուբլի։

—

Լուրերի համեմատ, շատ շուտով մտադրութիւն կայ հրատարակել օրէնք՝ զինուորական գատարանի ենթարկելու այն բոլոր անձանց, որոնք մեղադրվում են քաղաքական սպանութիւնների կամ սպանութեան փորձեր անելու մէջ, պատերազմական ժամանակի օրէնքներ գործադրելով դրանց վերաբերմամբ այսինքն մահվան պատժով։ Մտադրութիւն կայ նոյնպէս զինուորական դատարանին ենթարկել պայթուցիկ նիւթեր պահողներին։ (Բ. Բ. Ե.)

—

Յունվարի 21-ին, Կրոնշտատի զինուորական—ծովային դատարանում սկսվեց կրոնշտատեան անկարգութիւնների վերաբերեալ գործի քննութիւնը։ (Բ. Բ.)

—

Կոմս Վիտտէն, լուրերի համեմատ, բանակցութիւններ է վարում նահանգապետների մի քանի պաշտօնները տալ տեղական աւելի փորձված մարդկանց։ (Բ. Բ. Ե.)

—

«Ցնօբիս-Փուրցելի» լրագրին Պետերբուրգից հեռագրում են, յունվարի 15-ից, «Լուրեր են պտտում, որ կոմս Վորոնցով-Դաշկով, հակառակ պաշտօնական լրագրների ասածներին, մօտ ապագայում թողնելու է իր պաշտօնը։ Շուտով մտադրութիւն ունի Պետերբուրգ գալ յետոյ այլ ևս Կովկաս չի վերադառնալու համար։

—

Պրիբալտեան երկիրը խաղաղացնելու ժամանակ վնաս կրողներին գոհացնելու համար յատկացրվել է տան և մէկ միլիոն բուբլի։ (Ցն. Փ.)։

—

Նահանգապետի դիւանատունը առ այժմ 800 մարդկանց է տուել զէնք ունենալու վկայական։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը պաշտօնական գրութեամբ յանձնարարում է նահանգապետներին, որ նրանք իր ժամանակին խիստ միջոցներ ձեռք չառան յուզմունքներին վերջ տալու համար։

—

Թիֆլիսի վրաց սեմինարիայի ուսուցիչները, «Ցնօբիս Փուրցելի» լրագրի ասելով, ձայների մեծամասնութեամբ որոշել են հեռագիր ուղարկել սինոդին և խնդրել, որ հանվի սեմինարիայում բանակած զօրքը և ուսում սկսվի այնտեղ այնպէս, ինչպէս և միւս դպրոցներում։

—

Այս օրերս արդարադատութեան մինիստրը պետական խորհրդին ներկայացրեց մի նոր օրինագիծ, որով պէտք է երդուեալների դատարանի քննութեան յանձնվեն մի քանի այնպիսի գործեր, որոնք այժմ պէտք է քննվեն դատաստանական պալատում դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ։ (Կ. Բ. Ե.)։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Վերջին մի քանի ամիսների ընթացքում այստեղ և գիւղերում փորձանքի բազմաթիւ դէպքեր են տեղի ունեցել առաջացած հրազէնի հետ անզգոյշ վերաբերելուց։ Այդպիսիներից մէկը ամբողջ քաղաքացիներից յարգված գանձակեցի Սիմէօն Մկրտումեանն էր «Նադէժդա» ընկերութեան տեղիս գործակալը, որ սպանվեց յիշեալ պատճառից ամսիս 9-ին։ Հանգուցեալը իբրև մարդ շատ էր և իբրև հայ՝ արժանաւոր։ Տասը տարուց ի վեր վերընակվելով այստեղ, նա չէր զլանում իր բարոյական և նիւթական աջակցութիւնը հասարակական և ազգային գրեթէ ոչ մի գործում։ Երևի հանգուցեալի այս արժանաւորութիւններն էին գլխաւոր շարժառիթը, որ ամեն ոք շտապել էր նրա դագաղի վրա թափած արտասուքով արտայայտել իր ցաւակցութիւնը դէպի արժանաւոր մարդը, դէպի երիտասարդ վաղամեռիկը։ Գոնէ այս և սրա նման շատ կորուստներ խրատական լինի միւսների համար։ Գոնէ հասկանալի կը լինի, որ զէնքի հետ ունեցած վերաբերմունքն էլ պահանջում է նրա հասարակ և պարզ կանոնները իմանալ։ Ո՞րքան սոյն օրինակ զոհեր ենք ունեցել և հաւանականօրէն պիտի ունենանք. բայց ցանկալի է դրանց սահմանափակումը, որ կը լինի միայն զգոյշ վերաբերումով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Պաշտօնական։ Կարմիր Խաչի ընկերութեան գլխաւոր վարչութիւնից։ «Русь» թերթի երկրորդ համարում տպագրված էր քննիչ մասնաժողովի արձանագրութիւնը խմբագրական դատողութիւններով ու եզրակացութիւններով հանդերձ Կարմիր Խաչի ընկերութեան նախկին գլխաւոր լիազօր Ալէքսանդրօվսկու գործունէութեան մասին։ Քննիչ մասնաժողովի պատասխանը և յաջորդ արձանագրութիւնները կը տպագրվեն, իբրև հերքումն «Русь»-ի մէջ հաղորդածների, հէնց իրա մէջ և «Правит. Вѣстн.»-ում։ Նրա գործունէութեան մասին հաղորդածը ճիշտ չէ, նոյնպէս և ճիշտ չէ, որ նա հեռացված է իր պաշտօնից։ Թերթի յիշածները՝ նրա գործած գողութիւնների, զանցառութիւնների և կեղծիքների մասին, միանգամայն անհիմն են։ Այդ առիթով գլխաւոր վարչութիւնը որոշել է թերթերում յայտարարել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Ֆինանսների մինիստրը հրամայեց պօստի վարչութիւնը արտասահմանից բանդէրօլով ստացվող բոլոր ծրարները, որոնք մէջն պարունակում են ապրանքի նմուշներ, նոյնպէս և ծանրոցները, կենդանի թռչունների, մեղուների և ուրիշ անասունների, լաւ վերահսկել։ Այն իրերը, որոնք մաքսից ազատ են, պօստը ինքն է յանձնում, իսկ որոնք մաքս են վճարում՝ ուղարկվում են մաքսատունը։

Ակցիօներական և ապահովագրական ընկերութիւնները, յունվարի 24-ի և 25-ի իրանց նստարանում, միաձայն եկան այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է մերժել անկարգութիւնների ժամանակ հրդեհված գոյքերի համար յարուցված գանգատները։

ՊԱՐԻԶ, 26 յունվարի։ Պատգամաւորական պալատը յունվարի 27-ին կը սկսէ քննել ֆրանս-ռուսական առևտրական դաշնագրի ծրագիրը։

ՎԱՐՇԱՎԱ, 26 յունվարի։ «Курьер. Вар.»-ի թերթը հաղորդում է, որ պրուսական երկաթուղիները նախազգուշացնում են, որ նոր առևտրական դաշինքը գործածութեան մտնելու պատճառով ծանրոցների մեծ տեղափոխութիւն է կատարվելու Գերմանիայից դէպի Ռուսաստան։

ՊԼՕՑԿ, 26 յունվարի։ Բարձրագոյն հրամանով Դանիական թագաւորի թաղմանը ներկայ լինելու համար այնտեղ է ուղարկվում մի պատգամաւորութիւն Պլօցկում բանակ դրած 46-րդ զրադունների Պօրօյասլավսկի Ադէքսանդր III-ի գնդից, բաղկացած այդ գնդի գլխաւորից, նրան ադիւտանտից և վախմիստրից։ Գունդը պտակ է դնում։

ՎԻԱԶՄԱ, 26 յունվարի։ Կազմված է առևտրա - արդիւնաբերական կուսակցութեան ժամանակաւոր մասնաժողով։ Հոկտեմբերի 17-ի միութեան և սահմանադրական-ռամկավար կուսակցութեան կոչերը տարածված են աւելի պակաս յաջողութեամբ։

ԲԱԳՈՒՌ, 26 յունվարի։ Մտադիր են փետրվարի երկրորդ կիսում նաւթարդիւնաբերողների ժողով գումարել։

ՄՕՍԿՎԱ, 26 յունվարի։ Ի նկատի ունենալով զեմստվօյի ֆինանսական ծանր կացութիւնը, գաւառական վարչութիւնների ներկայացուցիչները վճռեցին դադրեցնել շինութիւնների համար նպաստներ տալը և, բացի ուսումնարաններից, անասունների ու երկաթի առևտուրը վերացնել։

ՄՕՍԿՎԱ, 26 յունվարի։ Նահանգապետը թոյլատրեց սահմանադրական-ռամկավար կուսակցութեանը ժողովներ գումարել գաւառներում։ Կառավարութիւնը թոյլատրել է Մօսկվայում գումարելու ստաբօբրատցի գիւղացիների ժողով։

ԻՐԿՈՒՏՍԿ, 26 յունվարի։ Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրված է «Восточное Обозр.» թերթը իր վաղակար ուղղութեան պատճառով։

27 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Վերջին շաբաթվայ ընթացքում խուզարկութիւնների ժամանակ Դվինսկում, Պօլտաւայում, Ռիգայում, Տուլայում, Վօլիսվիշկի գաւառում, Տօբոլցում, Մերվում, Բէլօստոկում, Լուգանսկում, Նիժնում, Վարշավայում, Օրգեվում գտնվել են մեծ քանակութեամբ հէկտոգրաֆներ, տարձանակներ, ռումբեր պատրաստող լաբորատորիաներ և մի քանի զաղտնի տպարաններ։

Ներքին գործերի մինիստրին ներկայացաւ կարմիրների պատգամաւորութիւնը, միջնորդելով որպէս զի թոյլատրվի Դումայի նիստերի ժամանակ իրանց կողմից մի առանձին ներկայացուցիչ ունենալ երբ որ քննվելիք խնդիրների մէջ գիւղացիական օրէնքները մտցնելու հարցը։

Գօրկին ջղային հիւանդութիւն ստացաւ, որին հետևեց առատ արիւնահոսութիւն։ Բժշկական խորհրդակցութիւն այն եզրակացութեան եկաւ, որ թոքերի բորբոքումն է առաջացել։ Բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ նա իրան մի փոքր լաւ զգաց։ Լրագիրների ասելով, Տամբօվի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ Տամբօվի նահանգական դատարանում կալանաւորված երդուեալհաւատարմատար Կալմանօվիչը արձակված է բանտից։

ԽԷՐՍՕՆ 26 յունվարի։ Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրված է «Югъ» թերթը մինչև զինուորական դրութեան վերջանալը։

ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ, 24 յունվարի։ Փորձեց փախչել բանտից տեղական ռազմիկ կազմակերպութեան անդամ Կալանդաձէ։ Շորերը փոխած բանդի վերակացուն հետևից և բռնեց գինետանը։ Կալանդաձէն ընդդիմացաւ, և վիրաւորեց խենջալով վերակացուին։ Վերջինս ատրճանակի զնդակով վիրաւորեց Կալանդաձէին, ապա բռնեցին և ուղարկեցին հիւանդանոցը։

ՊԱՐԻԶ, 26 յունվարի։ (Հաւաս) Լուրէն, Լօնդօնի կոմսութեան խորհրդի անդամներին ուղղած իր ճառի մէջ, ասաց, որ նա ինքը իր նախագահական գործունէութեան ամբողջ ժամանակամիջոցում, անդադար ձգտել է համերաշխութիւն ստեղծել Ֆրանսիայի ու Անգլիայի յարաբերութիւնների մէջ։

ՏՕԿԻՕ, 26 յունվարի։ Մարկիզ Իտօ գնաց Սէուլ։ Միկադօն պարգևեց գեներալ Դանիլովին առաջին կարգի հայելու շքանշանը։

ՍԱՄԱՐԱՏՕՎ, 26 յունվարի։ Զեմստվային ժողովը միացաւ քաղաքային զումայի որոշմանը, տեղափոխելու Նօվօ-Ալէքսանդրինսկի ինստիտուտը Սարատով որը նշանակում է քաղաքի կողմից խոշոր նպաստ։

ՍՕՖԻԱ, 26 յունվարի։ Ազգային ժողովի նիստերը այսօր մինիստր-նախագահը փակեց։

ԽԱՐԿՕՎ, 26 յունվարի։ Բնագիտական ընկերութիւնը պատգամաւոր ընտրեց մինչնորդելու գեներալ-նահանգապետի առաջ, ազատելու բանտարկված զօրեստ Բօգօյավլէնսկուն և այդ մասին հեռագրեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրին։ Դրպտունները այստեղից գնացին Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ, 26 յունվարի։ (Ռէյտեր) Զիֆուից հեռագրում են «Трибуна»-ին։ Իրերի դրութիւնը ձօրէայում անհաւատալի է։ Կայսրը իրապէս եապօնական զօրքերի գերին է, չը-նայած որ եապօնական լրտեսներով։ Դժուարութեամբ ստացայ կայսեր ինձ յանձնած և կայսերական կնիքով վաւերացրած զօրամնչնը, որի մէջ կայսրը յայտնում է, որ նա երբէք համաձայնութիւն չէ տուել կօրէա-եապօնական դաշնագրին, որ կնքված է 1905 թվի նոյեմբերի 4-ին։

Վեհապետական իր երբէք իրաւունքները չէ յանձնել մի օտար պետութեան. իրաւունք չէ տուել եապօնային հսկել կօրէայի ներքին գործերի վրա։ Ի վերջոյ կայսրը հրաւիրում է մեծ պետութիւններին հինգ տարով կազմել կօրէայի վրա պրոտէկտօրատ նրա արտաքին գործերին հսկելու համար։

ՊԱՐԻԶ, 26 յունվարի։ (Հավա) Ծովային մինիստր Տօմսօնը ասաց ծովային մամանաժողովում, որ անհրաժեշտ է ընդարձակել ծովային ծրագիրը, ընդծովեայ մակոյկներ և ռազմանաւեր շինելը։ Մշակված է ծովային զօրքը շատացնելու և նաւատորմի սպաների քանակը աւելացնելու օրէնքը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 26 յունվարի։ Վենէցուելայի խնդրանքով Միացեալ Նահանգները հրամայեցին իրանց պարիզեան դեսպանին իր վրա առնել Վենէցուելայի շահերի պաշտպանութիւնը։

ՊԷՆԶԱ, 26 յունվարի։ Այսօր ցերեկով ժամի 11-ին սպանվեց ոստիկանապետ Ցանատուրով։ Ոճրագործը բռնվեց։

ԼՕՆԴՕՆ. 26 յունվարի։ (Ռէյտէր). «Տրիբունա»-ին հաղորդում են Վաշինգտոնից, որ ծովային օֆիցերների մէջ խօսվում է՝ Զիանսանի դէմ ծովային ցույցի կարելիութեան մասին։ Հեռաւոր արևելք ուղարկվում են երկու կրէյսէր ևս։ «Դէյլի-Տելեգրաֆ»-ին Տօկիօյից հեռագրում են, թէ կանոնը ընարողական իրաւունքի օրինագծի հետ միասին իբրև փորձ կանոնց կը թոյլատրվի քաղաքական կուսակցութիւնների անդամները գրվել։ Կազմված է 7 անդամից բաղկացած գերագոյն բարձրագոյն յանձնաժողով, անօրինելու մանրուական գործերը և քննելու այն միջոցները, որով Մանջուրիան կարողանայ ձեռք բերել միջազգային դրութիւն՝ արդիւնաբերական և առևտրական տեսակէտից։

ԱԼԺԵԶԻՐԱԶՕ, 26 յունվարի։ Յունվարի 25-ին մարօկկեան ներկայացուցիչները որոշեցին Մարօկկօյի համար ազատութիւնների լիակատար ազատութիւն արտահանելի մթերքների հարցում, անասունների արտահանելը թոյլատրվում է տեղական բոլոր կայարանների միջոցով, թոյլատրվում է նոյնպէս հացի, ցորենի. ձուի և պտուղների ծովափնեայ լիակատար առևտուր։ Կոնֆերէնցիան ընդունեց Մարօկկօյի ցանկութիւնը, մտցնել ծխախոտային մենաշնորհ, հրատարակեց բոլոր ազդերիներին անձանց ամրգին առնակցելու սկզբունքը. հաւասարապէս մենաշնորհ։ ֆիֆոնի, հաշիշի և ծխախոտի համար։

ՆՈՐ-ԲԱՅՍԱԶԷՏ, 26 յունվարի։ Թուրքերը յարձակվեցին Նոր-Բայազէտից 70 վերստ հեռաւորութեամբ գտնվող հայ գիւղի վրա։ Այստեղ յուզմունք է տիրում. շուկան փակված է. Գաւառապետը մենակ անկարգութիւնները զսպելու համար։

ՊՕԼՏԱՎԱ, 26 յունվարի։ Նահանգապետը կոչով դիմեց շինական ազգաբնակութեան որի մէջ ասում է թերում յունվարի 16-ին Թագաւոր Կայսեր՝ գիւղացիներին ասած խօսքերը, զգուշացնում է Կայսրի և հայրենիքի խռովարարների և թշնամիների սուտ ճառերից, հանդուգն է խաղաղ պատրաստվել ընտրութիւններին, նախազգուշացնելով, որ ամեն մի բռնութիւն և իշխանութիւններին անհնազանդութիւն կը հնչեին ոյժով։

ԼՕՆԴՕՆ, 26 յունվարի։ Զէմբերլէյնը նամակով յայտնում է, որ մտադիր չէ իր թեկնածութիւնը դնել ուսիօնիստների լիդերի համար, և վճռապէս հերքում է այն լուրը, իբր թէ տարիքային բէնցիմի հարցը թողնված է Բալֆուրի հետ ունեցած անհամաձայնութեան պատճառով։ Եթէ Զէմբերլէյնի առաջարկութիւնները չեն ընդունվի իրաւ կուսակցականների մեծամասնութիւնից, նա կը կազմի սեփական խումբ։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 26 յունվարի։ Լրագիրներից, Մակսիմ Գօրկու հիւանդութեան մասին հաղորդած լուրը մտացածին է։ Գօրկին բոլորովին առողջ է։

ՔՈՒԹԱՅԻՍ, 26 յունվարի։ Ցերեկվայ ժամի 2-ին մահացաւ վերաւորված է գաւառապետ Գեղամօվը քաղաքի կենդրոնում։ Մարդասպանը փախաւ։

ՎԱՐՇԱՎԱ, 26 յունվարի։ Կոմս Զամօյսկուան մէջ, որպեսզի վերջերս գաղի պայթիւն առաջացաւ, գտնված են մի քանի արկղիկներ։ Կացնի հարուածից նրանցից մէնը պայթեց, վիրաւորելով կոտրողին։ Միւս արկղիկներում գտնված են 12 պետարդներ։

ՀՌՕՄ, 26 յունվարի։ Յունվարի 26-ի հրատարակով կայսրը ընդունեց Ֆօրտիսի կաբինէտի հեռանալը և յանձնարարեց Սօնինօ պատգամաւորին կազմել նոր մինիստրութիւն։

ՊԱՐԻԶ, 26 յունվարի։ Մօտենում է այն բոպէն, երբ Ալժէղիրսի կոնֆերէնցիան քննելու է ոստիկանութեան կազմակերպութեան հարցը։ Զը նայելով պաշտօնական շրջանների տիրող կասկածաւորութեանը, ֆրանսական հասարակական կարծիքը յուզված չէ։ Ամբողջ մամուլը, բացի «Մէկ»-ից անկարելի է համարում ոստիկանութեան կազմակերպութիւն յանձնել սուլթանին կամ միջազգային յանձնաժողովին։ «Էքօ-դէ-Պարի» լրաբերի համաձայն, գերմանական—այս հարցի մասին ունեցած ծրագիրը—որի հետ այժմ ծանօթացան ֆրանսական լիազօրները,—գիսմարաւ կերպով հակառակ է ֆրանսականներին։

ԼՕՆԴՕՆ, 26 յունվարի։ Երէկ, «Ռուսէլ-Օտելում» կայացաւ մի ժողով, նպատակ ունենալով աջակցել Անգլիայի մերձեցման Ռուսաստանի հետ։ Ժողովը տեսկին Նիմաբչի նախագահութեամբ միաձայն որոշեց, որ ներկայ ըօպէն աւելի քան յարմար է այդ բանի համար։

ԹԻՖԼԻՍ, 26 յունվարի։ Անդրկովկասեան երկաթուղային գծի ամբողջ տարածութեան վրա հրաման է տուած—նախապէս ձեռք առնելով ամեն միջոցներ հացէստէրների անձնաւորութիւնը որոշելու—քանալ նշանակած կայարաններում պօստային կապոցները, որոնց մէջ թերևս զէնք և ռազմամթերքներ կասկածվէին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուլիա, Զօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վիներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

ԶԻՆՕՎՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային

Զ. Ի. ԱԽՆԱԶԻՆՅԱՆ—11—12 ժ. մանրէաբ., վիներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱՐՍԱՄՅԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԴԶՆԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. ԳԱՐԱԳՇԵՅԱՆ—1—1½ ժ. ներքին և նշեցեալ հ.

ԳՈՆ-ԲԱՅԻՆԳ ՇԶԷՐԹԵՐԻՆԱ—2½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

Գ. Ճ. ԳՈՒՐԴԵՆՕՎ—1—3 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ և ծաղկաստ.։

Ռ. Դ ԱԲԵԱՆ—6—7 ժ. ներքին հիւանդ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Պ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։

Վճարը 50 կ. հաւասարեալ. Հիմնադրիչի հիշատակին և օգնութեան համար առանձին։

Հիմնադրիչի վերատեսուչ

բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 29-ին, Հայոց Դրամատիքական ընկերութեան դերասանների խումբը կը ներկայացնէ

I

ՄԿՆԻԿ

Վօդ. 1 գործողութեամբ, Վրոյրի։

II

ԱՐԶ

Վօդ. 1 գործ. Զէլսօվի։

III

ԷՍ ԷԼ ԴԻ ՄՕՅԻԲԼՈՒԹԻՆ

Վօդ. 1 գործ. Գ. Տէր-Գրիգորեանի։

Մասնակցում են. տ. Մելիքեան, պ.պ. Պետրոսեան, Յարութիւնեան, Ազաան, Ադելքանեան, Թշտունի։

Տեղերի գները. 1-ին կարգը 1 ր., 2-րդ կարգը՝ 75 կ., 3, 4, 5 կարգերը՝ 50 կ., 6—10 կարգերը՝ 40 կ., և 11—15 կարգերը՝ 30 կ.։

Հիւրերը, բացի զրանից, վճարում են մուտքի փող 1 բուբլի։

Սկիզբն է ճիշտ 7½ ժամին երեկոյեան, վերջը—10½ ժամին գիշերվայ։

(ու.չ.կ.) 2—3

Մի ուսուցիչ ցանկանում է սենեակ ունենալ մի ընտանիքում, որի փոխարէնը կը պարապի երեխաների հետ հայերէնից, ֆրանսերէնից և թուրքերէնից։

Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։ 2—5

Լոյս տեսաւ Ն. Լալայեանցի

„Արդարութեան նշանակուրիւնը կեանքի մէջ“

1. Ընդհանուր դատողութիւններ։ Գինն է 10կ.։ Օտարաքաղ. 50 օր. ոչ պակաս գնողները ստ. 30% զիջումն։ Հասցէն. Тифл. Тамар. ул. соб. д., у полотна жел. дор. 1—1

Տեղերի համար

ԼԱՊՏԵՐՆԵՐ

Հաստատված ձեւով

Լօրիս-Մելիքեան փողոց, տ. № 6. սեմինարիայի դիմաց։ 1—1

Զուրկանար (գերիեօր) Պրագի և բաժշկական ձեռնարանը աւարտած՝ տալիս է դասեր ջութակի վրայ, պատրաստում է նաև եկեղեցական երգեցիկ խումբ Եկմալեանի պատարագի արարողութեան եղանակով։ Հասցէն՝ Թիֆլիս, Դաւիթեան հրապարակ № 22 (Давидовская площадь № 22.) հարցնել Պետրոս Տէր-Աստուածատրեանին. (Неотъ Ив. Теръ-Асатуровъ. 1—2

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զղջարի հայոց ծխական հոգաբարձութիւնը հրաւիրում է 1905/1906 ուսումնական տարվայ երկսեռ դպրոցների համար փորձված ուսուցիչ, որը ցանկալի է լինէր ձեռարանի լարանները աւարտած։ Նա ունենալու է շաբաթական 24 դաս—հայոց լեզուից, թուաբանութիւնից և, եթէ կարելի է, երգեցողութիւնից և ստանալու է 680 բուբլի ռոճիկ, բնակարան, վառելիք և լուսաւորութիւն։ Ցանկացողները շտապեն դիմել. Кизляръ Терской области Армянскому Приходскому Попечительству. 1—3